# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 20 (1770) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 4, 2016
VOLUME 36, NO. 20 (1770) SATURDAY, JUNE 4, 2016

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## «Մասիս»-ի 35-Ամեակին Առթիւ

Սփիւռքահայ իրականութեան մէջ մեր ինքնութեան պահպանման գծով, այլ կառոյցներու կողքին մեծ դեր վիճակուած է նաեւ հայ մամուլին: Այդպիսի առաքելութիւն մը ունի նաեւ Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան օրկան «Մասիս» Շաբաթաթերթը: Այսօր՝ երբ կը տօնախմբենք մեր 35-ամեակը, անվարան կրնանք հաստատել, որ ան միշտ մնաց պատնէշի վրայ, հաւատարմօրէն ընթանալով զինք հովանաւորող կազմակերպութեան քաղաքական առողջ ուղեգիծով:

«Մասիս» իր առաջնորդող յօդուածներով, թարգմանը հանդիսացաւ բովանդակ հայութեան առօրեայ մտահոգութիւններուն: Մեր ազգային, քաղաքական եւ ընկերային այժմէական հարցերը լուսարձակի տակ առնելով, «Մասիս» չվարանեցաւ յայտնելու իր կարծիքը ու շինիչ առաջադրանքներով, մասնակից եղաւ մեր ժողովուրդի կեանքին հետ առնչուող բոլոր քննարկումներուն:

«Մասիս» լայն տեղ կը յատկացնէ Հայաստանին ու Արցախի հիմնահարցին, քաջ գիտակցելով, որ անոնք կը հանդիսանան մեր բոլորի ուշադրութեան եւ գուրգուրանքի առարկան: Հայաստանի իշխանութիւններու հասցէին մեր քննադատութիւնները կը բխին այն համոզումէն, որ համայն հայութեան հայրենիքը պէտք է դառնայ հայրենաբնակը մեր ժողովուրդին արժանապատիւ ապագայ երաշխաւորող այն երկիրը, որու շուրջ պիտի համախմբուի նաեւ սփիւռքահայութիւնը:

Մենք կը ձգտինք դառնալ ոչ միայն մեր գաղութի, այլ նաեւ՝ սփիւռքի առաջատար թերթերէն մին: Այս ուղղութեամբ, հոյլ մը որակեալ եւ կամաւոր աշխատակիցներու շնորհիւ, կ'ապահովենք նոխ բովանդակութիւն՝ այժմէական լուրերով ու այլազանութեամբ:

Անցնող 35 տարիներուն «Մասիս» յաջողեցաւ քայլ պահել նորարութիւններու հետ, 1994 թուականին դառնալով հայկական իրականութեան մէջ առաջին հայ մամուլը, որ սկսաւ հրատարակուիլ նաեւ էլեկտրոնային յատուկ կայքէջով, ընթերցողներու թիւը հասցնելով տասնեակ հազարներու:

Վերջին տարիներուն, տպագիր մամուլի կողքին, նոր ձեւ ու որակ ստացաւ նաեւ անգլերէն լեզուով լոյս տեսնող էլեկտրոնային MassisPost-ը, որ կը վայելէ մեծ ժողովրդականութիւն եւ որուն առօրեայ թարմ լուրերը կը կարդացուին մեծ հետաքրքրութեամբ:

Շար.ը էջ 4

## Թուրքիա Զգուշացուցած է Գերմանիային Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչնալու Հետեւանքներու Մասին

«Մասիսի» այս թիւը մամուլին յանձնելու պահուն Գերմանիոյ խորհրդարանը՝ Պունտեսթակը կը պատրաստուէր քուէարկելու հայկական Ցեղասպանութեան ճանաչման եւ Գերմանիոյ կրած պատասխանատուութեան մասին բանաձեւը:

Բոլոր տուեալները ցոյց կու տան թէ, բանաձեւի վաւերացումը անխուսափելի է, հակառակ Թուրքիոյ կողմէ, Նախագահի Ռեճեփ Էրտողանի մակարդակով հնչած զգուշացումները՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչման հետեւանքներու մասին:

Թուրքիոյ Նախագահը լրագրողներուն ըսած է որ, այդ քայլը կը վնասէ Գերմանիոյ եւ Թուրքիոյ միջեւ դիւանագիտական, տնտեսական, առեւտրային, քաղաքական եւ ռազմական կապերուն, շեշտելով, որ երկու երկիրները ՆԱԹՕ-ի անդամ են: Էրտողան ըսած է, թէ այդ ամէնը կը վերանայուի:

«Ռոյթերզ» մամլոյ գործակալութիւնը, վկայակոչելով Թուրքիոյ Նախագահականի աղբիւրները, կը յայտնէ, որ այս յայտարարութենէն առաջ Էրտողան հեռաձայնային խօսակցութիւն ունեցած է Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերկելի հետ, փոխանցելով իր մտահոգութիւնները՝ օրինագծի կապակցութեամբ:

Գերմանիոյ կառավարութեան խօսնակը հաստատած է որ, Էրտողանը եւ Մերկելը հեռաձայնային զրոյց ունեցած եւ քննարկած են նաեւ գաղթականներու հարցով Թուրքիա-Եւրամիութիւն համաձայնութիւններու իրականացումը:

Միւս կողմէ, Թուրքիոյ խորհրդարանի երեք կուսակցութիւններ Պունտեսթակի բանաձեւը դատապարտող յայտարարութիւն ստորագրած են: Իշխող «Արդարութիւն եւ Զարգացում», ինչպէս նաեւ ընդդիմադիր՝ «Ժողովրդահանրապետական» եւ «Ազգայնական շարժում» կուսակցութիւնները միատեղ յայտարարութիւն տարածած են, որուն տակ մերժած է իր ստորագրութիւնը դնել քրդմէտ «Ժողովուրդներու Դեմոկրատական» կուսակցութիւնը:

Յունիս 2-ի քուէարկութենէն առաջ կը հաղորդուի որ, Պունտեսթակի պատգամաւորները վերջին օրերուն էլեկտրոնային փոստով սպառնալիքներ եւ վիրաւորանքներ կը ստանան՝ բանաձեւի ընդունման հետ կապուած:

Խորհրդարանի բոլոր խմբակցութիւնները կը տեղեկացնեն, որ իրենց պատգամաւորները, յատկապէս՝ թրքական արմատներով խորհրդարանականները, վիրաւորանքներով լեցուն նամակներ ստացած են: Բանաձեւի նախագծի հեղինակ, «Կանաչներու» կուսակցութեան համանախագահ Ճեմ Օզդեմիր յայտնած է, որ էլեկտրոնային փոստով, Facebook-ով եւ Twitter-ով ստացուած նամակներուն մէջ անծանօթ անձինք իրեն «դաւաճան», «հայ ահաբեկիչ» եւ նոյնիսկ «նացիստ» կոչած են:

## Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակի Նախկին Ղեկավարը Սուր Քննադատութեան Կ'ենթարկէ Հայաստանի Իշխանութիւնները




Սամուէլ Բաբաեան եղոյթ կ'ունենայ «Սիվիլնեթի» կայքի հեռատեսիլով

Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Սամուէլ Բաբաեանը սուր քննադատութեան ենթարկեց Հայաստանի իշխանութիւններուն, յայտարարելով որ, կարելի չէ խաբել ժողովուրդին եւ քառօրեայ պատերազմի ժամանակ Ատրպէյճանի գրաւած տարածքները ունին ռազմավարական նշանակութիւն:

Երկար բացակայութենէ ետք Հայաստան վերադառնալով, «Սիվիլնեթի» կայքին տրուած հարցազրոյցի մը ընթացքին Բաբայեան յայտնեց, որ քառօրեայ պատերազմի ժամանակ Ատրպէյճանի յաջողութիւնները անսպասելի էին նոյնիսկ Պաքուի համար, սակայն փաստը այն է, որ ատրպէյճանցիք կարողացած են յայտնի դիրքերը գրաւել կէս կամ մէկ ժամուայ մէջ: «Ես չգիտեմ ով ա մետրով չափել՝ 800 ա՞, թէ՞ 1800: Ինչ վերաբերում ա էդ դիրքերին կոնկրետ Մարտակերտի ուղղութեամբ, դա երկակի ռազմավարական կէտեր են առաջինը, ապահովում էր էդ գիւղերը, էդ բնակչութիւնը ապրելու: Էդ հողերը հենց բնական Ղարաբաղի սահմանն էր: Երկրորդը, էդ տարածքից մենք կարում ենք, մեր բռան մէջ ա լինում ամբողջ հարթավայրը՝ Կիրովաբադից Միրբաշիրով:»:

Յայտարարելով, որ Ատրպէյճանը կը պատրաստուի պատերազմի, մեծ քանակութեամբ սպառազինութիւն կը գնէ՝ շեշտը դնելով հրետանիի, հրթիռային եւ օդային ուժերու վրայ եւ նպատակ ունի հողին հաւասարցնել առաջին գիծը, քաղաքներ եւ գիւղեր: Բաբա-

Շար.ը էջ 5

## Ձերբակալուած Են Բարձրաստիճան Զինուորականներ

Երկուշաբթի երեկոյեան ձերբակալուած են Հայաստանի բանակի երեք բարձրաստիճան զինուորականներ, որոնք սպառազինութեան եւ մատակարարման ոլորտի պատասխանատուներ էին:

Քննչական կոմիտէի նախագահի խորհրդական Սոնա Տռուզեան «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է թէ, տուեալներ կան, որ մատակարարուած ապրանքի որակը չէ համապատասխանած պահանջներուն, կամ գինը ինքնարժէքէն բարձր եղած է. - «Խօսքը գնում է մատակարարուած ապրանքների որակի մասին, ինչպէս նաեւ շուկայական գներն են վիճարկւում: Նշանակուել են դատաապրանքագիտական փորձաքննութիւններ՝ քրէական գործով էական նշանակութիւն ունեցող հանգամանքները պարզելու համար»:

Ապրիլեան 4-օրեայ պատերազմական գործողութիւններէն ետք, առաջին անգամ է որ բարձրաստիճան զինուորականներ կը բանտարկուին: Ձերբակալուած ամենաբարձրաստիճան պաշտօնեան զօրավար Մելսիկ Չիլինգարեանն է, որ վերջերս ազատուած էր Պաշտպանութեան Նախարարութեան սպառազինութեան վարչութեան պետի պաշտօնէն:

Ձերբակալուածներուն մէջ է նոյն վարչութեան ստորաբաժանման նախկին պետ, գնդապետ Արմէն Մարգարեանը: Ձերբակալուած երրորդ պաշտօնեան Պաշտպանութեան Նախարարութեան նիւթատեխնիկական ապահովման բաժնի պետ, գնդապետ Մհեր Պապեանն է, որ կը կասկածուի անփոյթ վերաբերմունք դրսեւորելու մէջ:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Ժառանգութիւն». Նոր ԸՕ-ն Մեծ Տեղ է Թողել Կեղծիքներով Իշխանութիւնը Պահելու Համար

«Ընտրական օրէնսգիրքն ընդունուել է առանց ընդդիմութեան եւ հասարակական դաշտի հետ համախոհութեան», - յայտարարում է «Ժառանգութիւն» կուսակցութիւնը՝ պնդելով, որ փաստաթուղթը ոչ միայն չի մեծացրել ընտրութիւնների նկատմամբ վստահութիւնը, այլեւ հակառակը՝ աւելի նուազեցրել է, մեծ տեղ թողել կեղծիքներով իշխանութիւնը պահելու համար:

«Ոչ միայն կոնսենսուսը չկայ, այլեւ յետքայլը կայ եւ ակնյայտութիւնը կայ, որ իշխանութիւնները նոյնիսկ այս պատերազմական օրերի ընթացքում ըստ էութեան որեւէ կերպ չփոխեցին իրենց մտածողութիւնը, այլ հակառակը՝ առաւել խորն է դարձել իրենց՝ ընտրակեղծարարութիւն անելու ցանկութիւնը», - ասաց «Ժառանգութեան» փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը՝ փաստարկելով. - «Որովհետեւ որքան վիճակը վատանում է, բնականաբար, այնքան իրենք աւելի քիչ ձայն են ունենում»:

Նա յիշեցրեց, որ «Ժառանգութիւն»-ն անգամ չմիացաւ «4+4+4» ձեւաչափին՝ այս իշխանութիւններից որեւէ ակնկալիք չունենալով, թէեւ ամբողջութեամբ սատարում էին հինգ պահանջները, որոնք, ըստ էութեան, թղթի վրայ էլ մնացին:

Ուստի կուսակցութիւնն առաւել եւս չի հաւատում իշխանութիւններին, թէ օրէնքն ուժի մէջ մտնելուց՝ Յունիսի 1-ից յետոյ էլ են հնարաւոր փոփոխութիւններ. - «Իշխանութիւնը շատ բան է ասում, իշխանութիւնը տարիներ շարունակ այդ դուռը անընդհատ բաց է պահում, բայց, պարզւում է, այդտեղ դուռ չկայ, այլ գրանիտէ մի պատուած է դրուած: Եթէ մտքներին լինէր ինչ-որ բան անելու, առանց մեզ ասելու, այդ առաջարկների տեղը իրենք շատ լաւ գիտեն: Յունիսի 1-ից յետոյ ի՞նչ է փոխուելու... Հասկանում եմ, Մանուկների պաշտպանութեան օրն է, սիմվոլիկ օր է, բայց արդէն ոնց որ թէ քաղաքական դաշտը մանուկ տարիքից անցել է, որ այլեւս նմանատիպ խաղերով զբաղուի»:

Ընդդիմադիր մի շարք ուժեր ու հասարակական կազմակերպութիւններ պահանջում էին քուէարկութիւնից յետոյ հրապարակել մասնակիցների անունները, թանաքոտել ընտրողների մատները, հրաժարուել վարկանիշային եւ տարածքային ցուցակներից, հարեւան Վրաստանի օրինակով մաքրել ցուցակները՝ առանձնացնելով երկրից բացակայողների անունները, ինչպէս նաեւ տեսախցիկներ տեղադրել տեղամասերում: Արդէն ընդունուած տարբերակում այս դրոյթները տեղ չեն գտել:

# «Պատերազմը Քթիդ Տակ, Դու Գնում Ես Արձակու՞րդ»

Գերագոյն խորհրդի նախկին պատգամաւոր Ազատ Արշակեանը ողջունում է Ժիրայր Սեֆիլեանի կոչը? հետ վերցնել ապրիլեան պատերազմում կորցրած 800 հեկտար տարածքը: Այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա նշեց, թէ ոչ միայն պէտք է վերցնել մեր տարածքները, այլ դեռ մի բան էլ աւել:

«Կարծում եմ, որ ամբողջ ընդդիմութիւնը պէտք է պահանջի իշխանութիւնից պատժել նրանց, ովքեր պատճառ դարձան այդքան զոհերի, պարզել, թէ ով է թոյլ տուել սահմանային հրամանատարին արձակուրդ գնալ Մարտի 30-ին կամ 31-ին: Ովքեր են այդ անփոյթները: Պատերազմը քթիդ տակ, դու գնում ես արձակու՞րդ: Անպայման քրէական գործեր է պէտք յարուցել»,-նշեց նա:

Ազատ Արշակեանին անհանգստացնում է նաեւ, թէ ուր են անհետացել բանակի սպառազինմանն ուղղուած գումարները. «Ու՞ր են մեր փողերը, ու՞ր են մեր դրոնները, սպառազինութիւնները: Եթէ չկար մեքենայի գումար, ոտքովման գայիք, եթէ չկար գումար՝ չունենայիք սփիւռքի նախարարութիւն, չկար կուլտուրայի համար փող, չունենայիք այդ նախարարութիւնը, բայց պաշտպանութիւնը, կրթութիւնը եւ առողջապահութիւնը պէտք է ստանայ իր գումարը, մնացածը թող ոտքով ման գան, կապուտաչեայ քարտուղարուհի թող չունենան»,-ասաց նա:

Արշակեանի խօսքերի հետ համաձայն չէր ասուլիսին ներկայ՝ ԱԺ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Մկրտիչ Մինասեանը: Նրա կարծիքով քառօրեայ պատերազմի ընթացքում թերացած անձինք պատժուել են:

# «Ես Տենց Միջադէպ Չեմ Ունեցել, Ինձ Չհաւատացողը Թուրք Ա» Մանուէլ Գրիգորեան

ԵԿՄ նախագահ, գեներալ Մանուէլ Գրիգորեանը պնդում է, որ Արցախում իր հետ կապուած ոչ մի միջադէպ տեղի չի ունեցել:

«Խաբող ա, թուրք ա, ինձ չհաւատացողն էլ ա թուրք: Ես տենց միջադէպ չեմ ունեցել: Սարքողները թուրքից թուրք են: Թող որեւէ մէկը մի բառ բերի օրինակ, թէ չէ իրանք էլ թուրք են»,- այսօր՝ Մայիսի 28-ին, Սարդարապատի յուշահամալիրում NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշեց Մանուէլ Գրիգորեանը՝ անդրադառնալով Արցախում իր մասնակցութեամբ միջադէպին:

Յիշեցնենք, որ Մարտական խաչի ասպետ Վահան Բադասեանն Aravot.am-ի հետ զրոյցում նշել էր, որ օրեր առաջ Մանուէլ Գրիգորեանը Հադրութով անցնելիս կանգնել եւ հայհոյել է զինծառայողներին, որոնք մեքենայով կանգնած են եղել ճանապարհին? իրենց իրերը դասաւորելու եւ դիրքեր մեկնելու համար: Մանուէլ Գրիգորեանին զայրացրել է հանգամանքը, թէ իր ճանապարհը նեղ է եւ չի կարող շարասիւնով անցնել:

Ըստ Բադասեանի՝ Մանուէլ Գրիգորեանի թիկնապահներն էլ մեքենաներից իջել են եւ սպառնացել զինուորներին:

# «Մինչեւ «Ֆորմուլա 1»-ի Մեկնարկը Հնարաւորութիւն Ունենք Առանց Կրակոցի Հետ Բերելու Կորցրած Տարածքները». Սեֆիլեան



Ազատամարտիկ Ժիրայր Սեֆիլեան

Այս օրերին Ատրպէյճանը յարաբերական անդորր է պահպանում իր երկրում Յունիսին անցկացուող «Ֆորմուլա 1» եւրոպական մրցարշաւը չձախողելու նպատակով, ոչ թէ միջազգային հանրութեան ջանքերի շնորհիւ: Այս մասին ասւում է Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար, ազատամարտիկ Ժիրայր Սեֆիլեանի տարածած յայտարարութեան մէջ:

«Այդ մրցարշաւն անցկացնելուց յետոյ նա վերսկսելու է սողացող պատերազմի մարտավարութիւնը, որը ենթադրում է նաեւ «ապրիլեան» տիպի լարուածութեան ալիքներ: Դժուար է պատկերացնել, որ երբեւէ Ատրպէյճանի ձեռքերն այսպէս կապուած կը լինեն: Ուստի մինչ մրցարշաւի մեկնարկը հայկական կողմը աննախադէպ հնարաւորութիւն ունի անգամ առանց կրակոցի հետ բերելու կորցրած տարածքները:

Եթէ Երեւանը կամ Ստեփանակերտը դրանք հետ վերադարձնելու յստակ պահանջ ներկայացնեն Պաքուին, հակառակ դէպքում սպառնալով ուժով վերականգնելու Արցախի տարածքային ամբողջականութիւնը, ապա Ատրպէյճանը, ամենայն հաւանականութեամբ, հետ կը քաշուի մինչեւ Ապրիլի 1-ի բնագծերը: Նման ազդեցութիւն կարող է ունենալ նաեւ յարձակման նպատակով մեր զօրքերի ցուցադրաբար կուտակումը համապատասխան ելման դիրքերում:

Անշուշտ, գոնէ տեսականօրէն պէտք չէ բացառել նաեւ այն սցենարը, որ Ատրպէյճանը միանգամից չի կատարելու հայկական կողմի պահանջը, ինչի պարագայում նա ստիպուած է լինելու այդ տարածքները յանձնել մեր փոքրածաւալ ռազմական գործողութեանը լուրջ դիմադրութիւն ցոյց չտալով եւ նահանջելով: Երկրորդ դէպքում տարածքների ազատագրման գործողութիւնը պէտք է կատարուի արդէն սերունդ տուած միջին տարիքի կամաւորների ուժերով:

Այս երկու սցենարների դէպքում էլ կարող ենք վստահ լինել, որ Ատրպէյճանը լայնածաւալ գործողութիւններ չի ձեռնարկելու եւ, ի վերջոյ զիջելու է գրաւուած տարածքները: Իսկ եթէ այս օրերի բացառիկ հնարաւորութիւնը չ՛օգտագործուի, ուրեմն այս ամէնը՝ Ատրպէյճանի ապրիլեան ագրեսիան, Արցախի Պաշտպանական բանակի անպատրաստ վիճակը, մեր հակայարձակման կասեցումը, տարածքների կորուստը թաքցնելու միտումը եւ դրանց հետեւած միւս բոլոր գործողութիւնները դաւադրութիւն է, որին մասնակցում է նաեւ Սերժ Սարգսեանը»,- ասւում է յայտարարութեան մէջ:

# Պետական Պարտքը Աւելացել է 3 Մլրդ Տոլարով, Տնտեսութիւնն Անկում է Ապրել

Ֆինանսների նախարարութեան տուեալներով, եթէ 2008-ին Հայաստանի պետական պարտքը 1 միլիարդ 906 միլիոն ԱՄՆ դոլար էր, ապա 2015-ի վերջին այն կազմում էր 5 միլիարդ 71 միլիոն դոլար:

Ազգային Վիճակագրական Ծառայութեան համաձայն, ճգնաժամից առաջ՝ 2008 թուականին, Հայաստանի համախառն ներքին արդիւնքը 11.9 միլիարդ դոլար էր, իսկ 2015-ին՝ 10.5 միլիարդ տոլար, այսինքն՝ աւելի քիչ: Եւ սա այն պարագայում, երբ, իշխանութիւնների պնդմամբ, 2010 թուականից ի վեր Հայաստանը միշտ տնտեսական աճ է արձանագրել:

Տնտեսագէտ Վահագն Խաչատրեանը հարց է բարձրացնում. եթէ տնտեսութիւնը չի աճել, այդ դէպքում ո՞ւր է գնացել աւելի քան երեք միլիարդ տոլարը, որը պէտք է մարեն Հայաստանի քաղաքացիները:

«Մենք փաստօրէն ունենք այնպիսի մի իրավիճակ, որ մենք ճգնաժամից փորձել ենք դուրս գալ, դուրս չենք եկել, օգտագործել ենք ահռելի ֆինանսական միջոցներ, պետական պարտք ենք կուտակել, բայց այդպէս էլ տնտեսական աճ՝ տոլարային արտայայտութեամբ, մենք չունենք», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց տնտեսագէտ:

Նրա խօսքով, ակնյայտ է, որ կուտակելով հսկայական պետական պարտք, Հայաստանի իշխանութիւնները մեղմ ասած անարդիւնաւէտ են ծախսել այդ միջոցները՝ թէեւ 2009 տնտեսական ճգնաժամից յետոյ բազմիցս յայտարարել են տնտեսական բարեփոխումներ անցկացնելու, տնտեսութիւնը դիւերսիֆիկացնելու մասին:

Նախագահ Սերժ Սարգսեանը, մասնաւորապէս, երեք տարի առաջ պահանջեց կառավարութիւնից մինչեւ 2017թ. տարեկան ապահովել 7 տոկոս տնտեսական աճ՝ այլապէս սպառնալով պաշտօնանկ անել գործադիրի ներկայացուցիչներին:

Մինչ կառավարութիւնում չեն դադարում խօսել վարկային միջոցների արդիւնաւէտութիւնից, Հայաստանի պետական պարտքը սրընթաց աճում է: Ֆինանսների նախարարութեան տուեալներով, միայն այս տարուայ առաջին չորս ամիսներին Հայաստանի քաղաքացիների ուսերին ծանրացել է եւս 181 միլիոն դոլար, եւ Ապրիլի 30-ի դրութեամբ երկրի պետական պարտքը կազմում է 5 միլիարդ 252 միլիոն դոլար:

«Այդ պետական պարտքի սպասարկման համար արդէն լրջագոյն գումարներ ենք մենք ծախսում. մօտ 190 միլիարդ դրամ անցեալ տարի է ծախսուել, եւ ես կարող եմ ասել, որ 2016-ին աւելի է լինելու, եւ այդ բեռի ազդեցութիւնը մենք աւելի շատ ենք զգալու», - ասաց Վահագն Խաչատրեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Մարկեդոնով. «Երկու Հարց է Քննարկւում՝ Լեռնային Ղարաբաղի Կարգավիճակը եւ Յարակից Շրջանների Կարգավիճակը»



*Ռուս քաղաքագէտ Սերգէյ Մարկեդոնով*

*Ներկայում Ղարաբաղի հարցով բանակցային գործընթացի շրջանակում երկու հարց է քննարկւում. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը եւ յարակից շրջանների կարգավիճակը: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է ռուսաստանցի քաղաքագէտ Սերգէյ Մարկեդոնովը:*

*Բանակցային գործընթացում քաղաքագէտը մեծ փոփոխութիւններ չի տեսնում: «Եթէ խօսենք համանախագահների մասին, ապա նրանք պնդում են հիմնարար սկզբունքների մասին: Օրերս հրապարակուեց համանախագահների յայտարարութիւնն այն մասին, որ ինքնորոշման, տարածքային ամբողջականութեան եւ ուժի չկիրառման սկզբունքները միեւնոյն չափով հաւասար են: Այստեղ նոյնպէս զգալի փոփոխութիւններ չենք տեսնում»,- նշեց Մարկեդոնովը՝ յաւելելով, որ հակամարտութեան կողմերի մօտ փոխզիջման բացակայութիւնն ու բռնութեան աճը վտանգաւոր են:*

*«Այն, ինչ տեղի ունեցաւ Վիեննայում, դիւանագիտական գործընթացը որոշակիօրէն հունի մէջ դնելու փորձ էր: Բայց ես չեմ կարող երաշխիքներ տալ, որ առաջիկայում բռնութեան առումով որեւէ շարժում չի լինի»,- ընդգծեց Սերգէյ Մարկեդոնովը:*

*Անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Իգոր Պոպովի յայտարարութեանը, որ Լեռնային Ղարաբաղը որոշակի փուլում պէտք է վերադառնայ բանակցային սեղանի շուրջ, նա յիշեցրեց, որ «մադրիդեան սկզբունքների» թարմացուած տարբերակի վերջին կէտը հենց այդ մասին է:*

*«Այդ կէտը խօսում է Ղարաբաղի կարգավիճակի շուրջ պարտադիր իրաւաբանական հանրաքուէի մասին: Այն ենթադրում է, որ իրենց ճակատագիրն արցախցիները պէտք է վճռեն, բայց խնդիրն այն է, որ ո՛չ Մինսկի խմբի համանախագահները, ո՛չ նրանց հետեւում կանգնած պետութիւնները չեն կարող այդ հարցը լուծել առանց Ատրպէյճանի հետ համաձայնեցնելու»,- նշեց քաղաքագէտը:*

*Իսկ Ատրպէյճանի Սահմանադրութեան համաձայն, ըստ նրա, առանձին տարածքում հանրաքուէ չի անցկացւում: «Այդ պատճառով, ինչ վերաբերում է ղարաբաղեան պատւիրակութեանը, չեմ կարծում, որ դա կ'արուի այստեղ եւ հիմա, քանի որ դա բաւական բարդ է: Բայց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման հարցը կարգաւորման կարեւորագոյն սկզբունք դարձնելու խնդիրն օրակարգում կը լինի: Փաստացի, եթէ ամփոփենք, երկու հարց է քննարկւում. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի եւ յարակից շրջանների կարգավիճակի հարցերը»,- յայտարարեց Սերգէյ Մարկեդոնովը՝ յաւելելով, որ վստահութեանն ուղղուած միջոցները չեն զարգանում, զրոյական են:*

## Սերժ Սարգսեան. «Նոր Սարդարապատ Չի Լինելու, Որովհետեւ Կայ Պետութիւն»



*Սերժ Սատգսեան ելոյթ կ'ունենայ Սարդարապատի Ցուշարձանին մօտ, շրջապատուած Ամենայն Հայոց Կաթողիկոսով եւ բարձրաստիճան պաշտօնեաներով*

*«1918 թուականին «Մայիսի 28» կերտողները կարող էին միայն երազել նման կանոնաւոր բանակ եւ նման նոր սերունդ տեսնելու մասին: Մենք դա տեսանք»,- Մայիս 29-ին Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրում Հանրապետութեան տօնի առթիւ ունեցած իր շնորհաւորական ելոյթում յայտարարել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը: Նախագահն ընդգծել է, որ այս տօնը Հայաստանի համար առաջին հերթին փրկութեան տօն է:*

*«Մենք փրկեցինք մեր վերջին հողակտորը եւ այդ հողակտորի վրայ մնացած մեր ժողովրդի վերջին բեկորները: Որքան էլ ծանր է խոստովանել, բայց դա էր իրականութիւնը: Յուսահատութեան եւ արնաքամութեան եզրին կանգնած հայ ժողովուրդն իր մէջ ուժ գտաւ՝ մի վերջին գերբնական ճիգով կանգնելու թշնամու դէմ, յաղթելու եւ հետ շպրտելու նրան: Մայիսեան հերոսամարտերը եւ դրանց յաղթական ելքը շատերը զարմանալի հրաշք էին անուանում: Մենք յաղթեցինք, մենք ապրեցինք եւ մենք ազատագրուեցինք: Մեր անկախութիւնն ու պետականութիւնը մեզ ոչ ոք չի նուիրել: Մենք դրա համար վճարել ենք այնքան, որքան թերեւս ոչ ոք չի վճարել: Մենք դա արել ենք մենակ, աւելին՝ մենք դա արել ենք ի հեճուկս ճակատագրի հարուածների»,- իր ուղերձում ասել է Սարգսեանը:*

*Անդրադառնալով Ապրիլի սկզբին ծաւալուած ռազմական գործողութիւններին, նախագահն ասել է, որ այդ իրադարձութիւններն աւելի տեսանելի դարձրին մի շարք իրողութիւններ՝ «Թէ՛ լաւ, թէ՛ վատ, թէ՛ մեր ներսում, թէ՛ մեր շուրջը»: Սարգսեանն ընդգծել է, որ իր համար ամենակարեւորը նոր սերունդն է՝ անկախութեան սերունդը, որը բոլորին ցոյց տուեց, որ ինքն է իսկապէս տէրն ու պատասխանատուն իր երկրի:*

## «Դժուար Է Հաւատալ, Որ Բռնապետ Ալիեւը Կը Պահպանի Որեւէ Խոստում»

*Դժուար է հաւատալ, որ իր տեսակի մէջ բռնապետ Ալիեւը կը պահպանի որեւէ խոստում. Եւրախորհրդարանի պատգամաւոր: Այս մասին «Արմէնփրէս»-ին տուած հարցազրոյցում նշել է չեխ ռազմական լրագրող, Եւրախորհրդարանի պատգամաւոր, ԵՄ-Հայաստան եւ ԵՄ-Ատրպէյճան խորհրդարանական համագործակցութեան, ինչպէս նաեւ «Եւրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի պատուիրակութեան անդամ Եարոմիր Շտետինան:*

*Նրա խօսքով, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների ցանկացած հանդիպումից ինչ-որ արդիւնք չեմ սպասում, պարզապէս սա դրական քայլ էր յատկապէս Ապրիլի սկզբին Ղարաբաղի հիւսիսային հատուածում Ատրպէյճանի զինուած ուժերի յարձակից յետոյ: «Ես կարծում եմ, որ երկու կողմերն էլ կարող են շահել այս հանդիպումից, ես կասեմ, թէ ով կը կորցնի այդ բանակցութիւնների հետեւանքով. կը կորցնի Ռուսաստանը, որի համար աշխարհաքաղաքական տեսանկիւնից, իհարկէ, այս հակամարտութեան սրացումը ձեռնտու է: Կարծում եմ՝ արդէն ժամանակն է խօսել Ղարաբաղի ճանաչման մասին, քանի որ այն արդէն 25 տարի է՝ ինքնուրոյն պետութիւն է եւ դրսեւորում է դրան բնորոշ բոլոր յատկանիշները: Առաջինը ռազմականն է. Ղարաբաղը յաղթանակել է 90-ականների սկզբի պատերազմում, եւ նրա պաշտպանութիւնն այնպիսին է, որ հնարաւոր չէ այն ուժով վերցնել, ինչպէս ասում է Ալիեւը: Նաեւ ակնյայտ երեւում է, որ պետականութիւնը դրսեւորւում է նաեւ տնտեսութեան տեսանկիւնից, քանի որ Ղարաբաղի յաջողութիւնները տնտեսութեան ոլորտում ակնյայտ են: Եւ ի վերջոյ ինքնուրոյն պետութեան դրսեւորումը երեւում է քաղաքական տեսանկիւնից, քանի որ այնտեղ գործում է խորհրդարան, որպիսին երբեմն չես գտնի տարբեր ժողովրդավարական երկրներում: Այդ իսկ պատճառով կարծում եմ, որ նմանատիպ խօսակցութիւնները միգուցէ հանգեցնեն նրան, որ վերջապէս աշխարհը սկսի հետաքրքրուել Ղարաբաղի՝ որպէս ինքնավար երկրի ճանաչման հարցով»,- ընդգծել է չեխ պատգամաւորը:*

*Նա ընդգծել է, որ ղրաբաղցիները միշտ պէտք է պատրաստ լինեն, քանի որ բոլոր դէպքերում դժուար է հաւատալ, որ իր տեսակի մէջ բռնապետ Ալիեւը կը պահպանի որեւէ խոստում:*

## Սամուէլ Բաբաեանի Վերադարձը Քննարկումներու Նիւթ

*ԼՂՀ ՊԲ նախկին հրամանատար, ԼՂՀ պաշտպան-ութեան նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Սամուէլ Բաբաեանի վերադարձը Հայաստան ներքաղաքական որոշ շրջանակ-ներում լայն քննարկման թեմայ է դարձել՝ առաջացնելով մի շարք հարցեր. ինչո՞ւ նա այսքան ժամանակ դրսում ապրելուց յետոյ վերադարձաւ, ո՞վ է նպաստել նրա վերադառնալուն, ի՞նչ կարող է նա անել ԼՂՀ-ում այս ընթացքում, այն դէպքում, երբ որեւէ լծակ չունի, եւ այլն: ԱԻՄ առաջնորդ Պարոյր Հայրիկեանից 168.am-ը հետաքրքրուեց, թէ նա ի՞նչ կարծիքի է Սամուէլ Բաբաեանի վերադարձի մասին, ու ըստ Հայրիկեանի՝ ո՞վ է օգնել պաշտօնաթող գեներալին վերադառնալ. Ռոբերդ Քոչարեանի՞ թիմը, թէ՞ Սերժ Սարգսեանի:*

*ԱԻՄ առաջնորդը, ի պատասխան 168.am-ի հարցա-դրման, ասաց. «Իր վերադառնալն արգելուած չի եղել, նա բանտից ազատուելուց յետոյ նոյնիսկ կուսակցական գործունէութիւն ծաւալելու փորձ էր կատարում, դա էլ եմ յիշում: Ինչ վերաբերում է իր գնալ-գալուն, ապա պարտադիր չէ, որ ոեւէ մէկը նրան աջակցի, բայց կարող է՝ նաեւ աջակցողներ էլ լինեն, չեմ բացառում: Հայաստանի քաղաքական կեանքում, նկատի ունեմ նաեւ Արցախը, ներառուած լինելու համար պէտք է ինչ-որ ժամանակ գործունէութիւն ծաւալես, համակիրների թիմ ստեղծես, դրա իրաւունքը ոեւէ մէկը չի կարող սահմանափակել»:*

## «Մասիս»-ի 35-Ամեակին Առթիւ

*Շարունակուածէջ 1-էն*

Իր 35-ամեակին առիթով «Մասիս» կ'ողջունէ հայրենիքի եւ սփիւռքի լրատուական բոլոր կառոյցներն ու գործիչները, որոնք կ'արտացոլացնեն մեր ժողովուրդի առօրեայ կեանքը, իր այլազան նուաճումներով ձեռքբերումներով, բացթողումներով ու շինիչ քննադատութիւններով:

Այս առթիւ կ'ողջունենք նաեւ «Մասիս»-ի անձնակազմը, խմբագիրներն ու յօդուածագիրները եւ թերթի գոյութեան ու յարատեւման սատարող նուիրատուները, հովանաւորներն ու զովազդողները:

Վարձքը կատար բոլորին:

**«ՄԱՍԻՍ»**

## Հայ Դատի պաշտպան Էրէն Քէսքին 3 տարի եւ 9 ամիս բանտարկութեան դատապարտուեցաւ



«Էօզկիւր Կիւնտէմ» թրքական թերթի նախկին տնօրէնուհի, Հայ դատի ի նպաստ իր դիրքորոշումով ծանօթ փաստաբանուհի Էրէն Քէսքին եւ նոյն թերթի նախկին խմբագրապետ Ռէյհան Չափան, այդ թերթին մէջ լոյս ընծայուած յօդուածներով «ահաբեկչական կազմակերպութեան քարոզչութիւն» ընելու մեղադրանքով 3 տարի եւ 9 ամիս բանտարկութեան դատապարտած են:

Վճիռին մէջ նշուած է, որ անոնք անցեալին ալ դատապարտուած ըլլալով՝ պատիժներու գեղչ կամ որեւէ փոփոխութիւն չի նախատեսուիր:

Թերթին փաստաբանը Էօզճան Քըլըչ յայտարարած է, թէ այս պատիժները միայն անոնց լրագրական գործունէութեան պատճառով սահմանուած ըլլալով, պիտի բողոքէն:

Էրէն Քէսքին յայտնած է, թէ թերթին մէջ այդ պաշտօնը վարած տարիներուն անոր սիւնակներուն մէջ լոյս տեսած «ահաբեկչութեան քարոզչութեան» մեղադրանքներու կապակցութեամբ շուրջ 50 դատ բացուած է իր դէմ: Ան աւելցուցած է թէ Թուրքիոյ մէջ կը փորձեն մամլոյ եւ արտայայտութեան ազատութիւնը կաշկանդել նաեւ դատական միջոցներով:

Այս մասին խօսելով «Թարաֆ» թերթին, Քէսքին ըսած է. «Վճիռը զարմանալի չեմ գտներ: Պիտի դիմենք բարձրագոյն ատեանին: Բայց նոյնիսկ եթէ իմ պատիժը հաստատուի, պիտի շարունակեմ պայքարիլ»:

Ան նաեւ խստօրէն քննադատած է իրենց դէմ նկատի առնուած՝ «անցեալին ալ դատապարտուած» ըլլալը եւ ըսած է, թէ երկրի մը մէջ ուր մարդիկ կ'անհետացուին, քննութեան ընթացքին չարչարանք կը գործադրուի, անծանօթ հեղինակներով մարդասպանութիւններ կը գործուին, մարդկային իրաւանց ծանր բռնաբարումներ տեղի կ'ունենան, այդ բնորոշումը իրենց պարագային բոլորովին անհամեմատելի է եւ ցոյց կու տայ, որ այս վճիռը կողմնակալ ձեւով արձակուած է: Ակնարկելով վերոնշեալ ծանր յանցանքներուն, Քէսքին աւելցուցած է, թէ Թուրքիա այդպիսի ոճիրներ քօղարկելու հիման վրայ հիմնադրուած պետութիւն մըն է:

## Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակի Նախկին Ղեկավարը

Շարունակուած էջ 1-էն

եան աւելցուց, որ Հայաստան չի կրնար մրցիլ Ատրպէյճանի հետ ո'չ ֆինանսական, ո'չ մարդկային միջոցներով. - «Դուք պատկերացրէք, որ ինքը Նախիջեւանում դնում ա իսրայէլական, ռուսական տարբեր ռեակտիւ համակարգեր: Հարց է ծագում՝ ո՞ւմ համար: Դնում ա Ղարաբաղի՞ն խփելու: Ղարաբաղին կարա Ղարաբաղի դիմացին դնի, ոչ թէ Նախիջեւանում: Այսինքն, երբ որ մենք խօսում ենք, որ մենք պատրաստ ենք իբր յարձակումներ սկսելու, հակառակորդն անպայման օգտուելու ա ու խփելու ա մինչեւ անգամ Երեւան: Երեւանից Նախիջեւան 42 կիլոմետր ա: Էդ զէնքերը, էդ ռեակտիւ հրթիռային համակարգը աշխատում ա 70-ից մինչեւ 150 Մենք պատրա՞ստ ենք պաշտպանուենք դրանից, մեր ժողովրդին, մեր քաղաքներն ու գիւղերը: Հո նրանով չի՞, որ Պաքու թէյ ենք խմելու: Կարաք Պաքու թէյ խմէք, բայց վախում եմ, իրանք աւելի շուտ հասնեն Երեւան՝ թէյ խմելու: Չի կարելի գեներալսկի հագուստներ հագնել, կոլխոզի նախագահի յայտարարութիւններ անել: Մեր զինուորը չի կարա էդքան հրթիռ եթէ մի րոպէում մօտաւորապէս 25 հազար արկ ա թափուելու առաջին գծի վրայ, կարա՞ մարդ ընդէ կանգնի: Ի՞նչ ա նշանակում՝ մեր հոգին բարձր ա, ինչ ա, հրթի՞ռ ա բռնելու, թէ՞ արկ ա բռնելու զինուորը օդում: Մենք պարտաւոր ենք զինուորի անվտանգութեան մասին էլ մտածել»:

Սամուէլ Բաբաեան կ'առաջարկէ նախեւառաջ շեշտը դնել օդային պաշտպանութեան վրայ, քանի որ ատրպէյճանական կողմի հեռահար հարուածները՝ հրետանային, հրթիռային, օդուժի, հայկական կողմին պիտի հասնին օդով - «Առաջարկել էի այդ ռազմավարութիւնը առաջին հերթին օդը փակել եւ հնարաւորութիւն չտալ հակառակորդին: Իսկ քանի որ սկսած արկից, հրթիռից, ինքնաթիռից, անօդաչու սարքից, օդով ա գալիս, մեզ խնդիր ունենք օդը փակելու: Ես նշել էի տուեալ զէնքերը, որը լրիւ, հարիւր տոկոսանոց ապահովում ա դա: Ասենք, եթէ յորդառատ անձրեւ ա գալիս, դու զոնտիկը վերցնում ես, դուրս գալիս, որ գլխիդ չթափուի: Էդ զոնտիկը պէտք ա առաջին հերթին ապահովենք: Երկրորդ քայլը, նորից նոյն ձեւի էդ փաստաթղթում սարքը ներկայացրել եմ, ֆիկսում ա հակառակորդը որտեղից ա խփել, տալիս ա կողքի իրա հրետանուրին, որը կառավարուող արկով փչացնում ա էդ տեխնիկան, որը քան միլիարդ տուել ա ատրպէյճանցին, առել»:

Ըստ Սամուէլ Բաբաեանի, սեղանին դրուած է ոչ թէ Ղարաբաղի, այլ ողջ հայոց պետականութեան հարցը. - «Բայց ռազմական ոլորտի ղեկավարութիւնը ոչ թէ սեփական ժողովրդին խաբի, որ մենք, ապեր, մի երկու հրթիռով Պաքուն հողի հետ հաւասարեցնելու ենք՝ անգամ չհասկանալով էդ հրթիռի հզօրութիւնը կամ նրա հնարաւորութիւնները: Չի կարելի խաբել սեփական ժողովրդին»:

## ՄԷԿ ՇԱԲԹՈՒԱՆ ՄԷՋ 13 ՀԱԶԱՐ ԱՐԱԲ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԻՏԱԼԻԱ ՀԱՍԱՆ

Գաղթականներ տեղաւորելու հարցը հսկայ տագնապ յառաջացուց Իտալիոյ իշխանութիւններուն մօտ: Արդարեւ, Բալիրմօ քաղաքէն ստացուած տեղեկութեանց համաձայն, միայն անցեալ շաբաթուան ընթացքին աւելի քան 13000 գաղթականներ Իտալիա ժամանած են գալով Եգիպտոսէն եւ Լիպիայէն: Սիկիլիա կղզիին մէջ հաստատուած ընդունման կեդրոններն արդէն խճողուած են: Իսկ մարզասրահներն ու դպրոցական սրահներն իրենց հերթին լեփ լեցուն են: Թէեւ իսկոյն կատարուած են ժամանող գաղթականներու տեղաբաշխումները դէպի տարբեր քաղաքներ, այսուհանդերձ, տագնապը կը կրէ սուր բնոյթ: 200 գաղթականներ մահացած են, ծովամոյն եղած փոխադրանաւերու պատճառով: Եգիպտացի գաղթականներու բացատրութեամբ անոնք ճամբայ ելած են անապահով ապագայի պատճառով: Իսկ լիպիացիները՝ քաղաքացիական շարունական պատերազմի բերումով...:

## ԼԻԲԱՆԱՆ
## ԹՐԻՓՈԼԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՋ

Լիբանանի երկրորդ մեծագոյն քաղաք Թրիփոլիի մէջ, անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան թաղապետական եւ քաղաքապետական հանգրուանային ընտրութիւնները:

Սիւննի քաղաքական անձնաւորութիւններէն Աշրաֆ Ռիֆիի ցանկը յաղթելով պարտութեան մատնեց նախկին սիւննի վարչապետներ Սաատ էլ Հարիրիի եւ Նաժիպ Միքաթիի ցանկերը: Նշենք նաեւ որ 24 աթոռներ բաղկացած նորընտիր քաղաքապետական խորհուրդէն ներս ոչ մէկ քրիստոնեայ կամ ալաուի կայ: Այսպիսով խախտուած եղաւ անցեալի աւանդութիւնը:

## ՍՈՒՐԻԱ
## ԻՏԼԻՊԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ ԿՈՐԾԱՆԱԾ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԴՈՒԺԻՆ ԿՈՂՄԷ

Ռուսաստանի մօտ Սուրիոյ դեսպան Ռիատ Հատտատ յայտարարութիւն մը կատարելով նշեց որ Իտլիպ գաւառի մէջ բժշկութիւն Առանց Սահմանի հաստատութեան կողմէ գործող հիւանդանոց մը քար ու քանդ եղած է ԱՄՆ-ի օդուժի պատկանող օդանաւերու ռմբակոծումներու հետեւանքով եւ ոչ թէ ռուսական սաւառնակներով:

Ռուսական օդուժը ռմբակոծած է մի միայն Իսլամական Պետութեան եւ Ժապհաթ Ալ Նուսրայի դիրքերը: Այս որոշումն առնուած է Ռուսաստանի Դաշնութեան Վերին Խորհրդարանի կողմէ միաձայնութեամբ եւ հաստատուած նախագահ Փութինէն, Սուրիոյ զինեալ ահաբեկիչներու դէմ գործածուելու համար:

## ԵԳԻՊՏՈՍ
## ՄԱՄԼՈՅ ՍԷՆՏԻՔԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԱԾ

Եգիպտոսի Մամլոյ Սէնտիքայի Նախագահն ու իր երկու գործակիցները շուտով դատավարութեան կրնան կանչուիլ: Անոնք ամբաստանուած են ընդդիմադիր լրագրողները խրախուսած ըլլալու մեղադրանքով: Արդարեւ վերջերս Եգիպտոսի մէջ որոշում առնուած էր կաշկանդելու լրատուական ազատութիւնները: Նշենք նաեւ որ անցնող Մայիս ամսուան ընթացքին իշխանութիւնները ձերբակալած էին երկու թղթակիցներ, որոնք կ'աշխատէին ընդդիմադիրներու «Պահուապէթ Եանայէր» կայքէջին համար:

## Համահայկական խաղերը կանցկացվեն Արցախում

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեն որոշել է 2017թ. Համահայկական 7-րդ ամառային խաղերն անցկացնել Արցախում,-տեղեկացնում է news.am-ը: Գործադիր կոմիտեի նիստում առաջարկն արել է ՀԽՀԿ նախագահ Իշխան Զաքարյանը: Այն մեծ ոգեւորությամբ են ընդունել գործկոմի բոլոր անդամները:

,Սա պատմական որոշում կլինի՝ մեր գաղափարների իրագործման անկյունաքարը: Այս որոշումն իրապես կարտացոլի մեր նպատակը՝ ,Հայաստան-Արցախ- Սփյուռք եռամիասնությունըե,- նշել է Իշխան Զաքարյանը:

Համահայկական 7-րդ ամառային խաղերն Արցախում անցկացնելու հարցը դրվել է քվեարկության եւ ընդունվել միաձայն:

ՀԽՀԿ գործկոմը որոշում է ընդունել նաեւ ՀԽՀԿ Գլխավոր Ասամբլեան անցկացնել Արցախում՝ 2017թ. սեպտեմբերի 3-ին: Համահայկական 2-րդ ձմեռային խաղերն կանցկացվեն 2018թ. փետրվարին Ծաղկաձորում:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ՝ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ, ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԱԾ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ



Հաւասարակշռուած ազգային գործիչ, մտաւորական, կրթական մշակ, դաստիարակ, բանաստեղծ, Հայաստանով եւ Սփիւռքով ապրող հայրենասէր, փոթորկոտ միտքերով հանդարտ եւ չափաւորական գրող: Ահաւասիկ այսպիսի բառերով նկարագրուեցաւ Ընկ. Պէպօ Սիմոնեանը իր գործերու նորագոյն հաւաքածոյ՝ «Գրականութեան Ճամբուն Վրայ» գիրքի շնորհահանդէսին ընթացքին:

Կազմակերպութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքին եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Ուրբաթ 27 Մայիս 2016-ին,Անթիլիասի մայրավանքի «Կիլիկիա» թանգարանին մէջ տեղի ունեցաւ Ընկ. Պէպօ Սիմոնեանի «Գրականութեան Ճամբուն Վրայ» գիրքին շնորհահանդէսը՝ հանդիսութիւն մը, որ վերածուեցաւ մեծ մտաւորականի եւ ազգային գործիչի մեծարանքի եւ անոր ձգած աւանդի բառաբանման երեկոյի: Շնորհահանդէսը կը վայելէր Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութիւնն ու ներկայութիւնը: Ներկայ էին նաեւ Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանը, հոգեւոր հայրեր, Ընկ. Պէպօ Սիմոնեանի այրի՝ Տիկ. Ազատուհի Սիմոնեանն ու ընտանիքի անդամները, ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ, պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանը, ՍԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեանը, լիբանանահայ մտաւորականներ, Ընկ. Պէպօ Սիմոնեանի գրչի ընկերներն ու բարեկամները, գրականասէր եւ մշակութասէր ընտրանի մը, հոգեւորական, միութենական անձնաւորութիւններ, կրթական մշակի աշակերտներն ու շրջանաւարտները, ինչպէս նաեւ լիբանանահայերու հոծ բազմութիւն մը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի փոխ տեսուչ Պօղոս Վրդ. Թինքճեան: Ան ներկայացուց օրուան բանախօսները՝ անոնց ակադեմական աշխատանքները եւ պաշտօնները, ինչպէս նաեւ շնորհահանդէսի յայտագիրը:

## Դոկտ. Երուանդ Տէր Խաչատուրեան

Դոկտ. Երուանդ Տէր Խաչատուրեան պատիւ համարեց հարուստ ժառանգութիւն ձգած Սիմոնեանի նման մարդոց հետ աշխատիլը: «Կան երկու տեսակի մտաւորականներ: Մէկը՝ գրական ասպարէզ կը մտնէ աղմուկով, ուրիշներ՝ լամառ աշխատանքի մարդիկ, որոնց կատարածը գուցէ շուտով չերեւիր մարդոց: Սիմոնեան երկրորդ տեսակի խմբակին կը պատկանի: Անոր ներկայութիւնը միշտ եղած է հանդարտ ու հաւասարակշիռ», ըսաւ Դոկտ Տէր Խաչատուրեան: Ան յիշեցուց, որ հակառակ իր վերջին տարիներու ֆիզիքական դժուարութիւններուն, Սիմոնեան ջերմ վերաբերմունք ունէր մեր կեանքի տարբեր երեւոյթներուն՝ գրականութեան եւ մշակոյթին հանդէպ: «Այն ինչ տեսայ իր արխիւին մէջ, զարմացուց ինծի, թէեւ ես հետեւած եմ իր հրապարակումներուն», ըսաւ ան: Տէր Խաչատուրեան բացատրեց գիրքի կազմութեան հանգրուանները, սկզբունքները եւ բովանդակութիւնը, ներառուած է դասական գրականութիւն, գրախօսութիւններ, ժամանակակից գործեր, լեզու, մշակոյթ, Սփիւռքի հոգեր: Բազմաթիւ նիւթեր ակամայ դուրս մնացած են գիրքէն: «Պէտք է գլուխ խոնարհենք մեծանուն մտաւորականի յիշատակին առջեւ: Ան ինքզինք միշտ կը զգար Հայաստանի, հայ գրականութեան մէջ: Ամէն մէկ դրսեւորում ան կը կապէր թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի հետ: Այս նշում կը կատարէ ընտիր մտաւորականի: Գիրքը կը բանայ Սիմոնեանի ապրումները, զգացումները», նշեց Դոկտ. Երկուանդ Տէր Խաչատուրեան: Անոր խօսքով գիրքը կը բացայայտէ Սիմոնեանի արիութիւնը, կիրքը, ըմբոստութիւնը, իրականութեան հանդէպ շատ գործնական մօտեցում ունեցող մարդու սկզբունքները: Տէր Խաչատուրեան շեշտեց «Սիմոնեանի քաղաքացիական դիրքորոշումին» կարեւորութիւնը, մանաւանդ որ շատերու մօտ այդ դիրքորոշումն ու սկզբունքը բացակայ է այսօր: Անոր համաձայն, գիրքին վերջին հատուածը կը ներկայացնէ Սիմոնեանի անհատականութիւնը: «Ան կ'ապրի իրականութեան ամէն մէկ փաստը: Շատ հանդարտ եւ լուռ մարդը յանկարծ կը ներկայանայ իբրեւ շատ կրքոտ քաղաքացի եւ հայրենաէր: Այս իսկական հայու եւ մտաւորականի պատկեր է: Ան միշտ պատնէշի վրայ էր: Եթէ այսպիսի մարդիկ են ղիավարնեըը, ապա նաւակը վստահաբար ապահով ցամաք կը հասնի», ըսաւ Տէր Խաչատուրեան:

## Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան

Oxford համալսարանի դասախօս Դոկտ. Հրաչ Ջիլինկիրեան բաժնեց Պէպօ Սիմոնեանէն իր յուշերը եւ տպաւորութիւնները: «Սիմոնեան երիտասարդներուն մէջ մշակոյթի հանդէպ սիրոյ եւ կայծ տալու կարողութիւնը ունէր՝ յատուկ մօտեցում դրսեւորելով: Ան գիրի ու գրականութեան հանդէպ սէր ցանեց, կենսագործեց սէրը՝ կեանքին ու հայրենիքին, մարդկային իրաւունքներու, արուեստի տարածման ուղղութեամբ: Իր ազգային ծառայութեան ընթացքին Պէպօ Սիմոնեան եղաւ խիղճի ու հայրենասիրութեան հայելի մը: Ան հեռացած է մեզմէ, բայց իր տիպարը տակաւին շատ պատգամներ ունի տալիք», ըսաւ Ջիլինկիրեան: Ան նշում կատարեց մանաւանդ արեւմտահայերէնի պաշտպանութեան հարցին եւ յիշեցուց, որ Oxford-ի մէջ տակաւին վերջերս կայացաւ գիտաժողով մը՝ նուիրուած արեւմտահայերէ հարցերուն: «Սիմոնեանի մտահոգութիւնները տեղ գտած են այս նոր գիրքին մէջ: Այս պատեհ առիթ է նայելու գրողին, մտածողին ու ստեղծողին, որ լեզուն կը դարձնէ հրաշալի», ըսաւ բանախօսը: Ան անդրադարձաւ արեւմտահայերէնի կենսունակութեան, լուրջ թիւով գրողներու, մամլոյ գործիչներու եւ խմբագիրներու կարեւորութեան, ամրապնդելու համար արեւմտահայերէնն ու անոր գործածութիւնը: «Լեզուն պէտք չէ միայն փրկիչ տեսնել, այլ իմաստ եւ զգացումներ արտայայտող միջոց: Փողոցը խօսուած հայերէնը նոյնքան կարեւոր է, որքան գրականը: Շատերու համար, այս սրբութիւն սրբոցը հայ ինքնութեան գլխաւոր գրաւականն է», հաստատեց Ջիլինկիրեան:

## Արամ Ա. Կաթողիկոս

Մեծի Տանն Կիլիոյ Արամ Ա. Կաթողիկոս առաջարկեց Պէպօ Սիմոնեանի կեանքի գիրքը խորագրել «Խոնարհ նկարագրով, համբերատար հոգիով, հաւասարակշռուած մօտեցումով եւ համահայկական մտածողութեամբ մարդը»: Վեհափառ հայրապետը պատմեց 1978-էն սկսեալ իր ծանօթութիւնը Ընկ. Պէպօ Սիմոնեանին հետ: «Ան իւրայատուկ անձ մըն էր իր պարզութեամբ, միշտ հաւասարակշռուած մօտեցումով: Որպէս ուսուցիչ, մտաւորական, տնօրէն, ժողովական եւ ազգային գործիչ, այդպէս ճանչցանք Պէպօ Սիմոնեանին: Նոյնիսկ փոթորկոտ Պէպօ Սիմոնեանի իր գրականութեան մէջ ան ինքզինք հանդարտութեամբ կ'արտայայտէր: Միշտ ըսելիք ունէր: Արեւմտահայերէնի պաշտպանութիւնը դարձաւ անոր կեանքին հոգերէն մէկը: Ան իր կարեւոր մասնակցութիւնը բերաւ Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնաժողովին: Իր կարելիութեան սահմաններուն մէջ մեծապէս օգտակար եղաւ Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի աշխատանքներուն ծիրէն ներս, հանգուցեալ Գէորգ Գանտահարեանի հետ, որուն մահէն ետք ստանձնեց ատենապետութիւնը այդ յանձնախումբին: Իր հետ գործակցիլը դիւրին էր, դրական էր, հեշտ էր: Բաց հոգիով եւ հաղորդական մօտեցումով մարդ մըն էր Սիմոնեանը: Մենք այսպէս ճանչցանք Պէպօ Սիմոնեանին», ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս: Ան մեծ բացակայ որակեց Պէպօ Սիմոնեանը ու իր հետքերը ձգած է մեր կեանքին մէջ: Վեհափառ հայրապետը ցաւ յայտնեց, որ նման գործիչներու թիւը հետզհետէ կը նուազի: «Պէտք է հպարտանանք անոնցմով, որոնք գործեցին ու անցան: Միաժամանակ, պէտք է հպարտանանք

Շար.ը էջ 18




# ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝ ԻԲՐԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԷՄՔ

ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ




Վերջին մէկ դարու պատմութեան մէջ սակաւաթիւ են այն հայ գրողներն ու բանաստեղծները, որոնք միաժամանակ ակներեւ դարձած են նաեւ իրենց ազգային, կուսակցական եւ կրթա-մշակութային օգտաշատ գործունէութեամբ:

Այդպիսի երախտաւորներէն էր Պէպօ Սիմոնեան: Ան՝ երիտասարդութեան կանուխ տարիներէն սկսեալ, իր մէջ զգացած էր ներուժ մը, ծառայելու հայ դպրութեան ու հասարակութեան: Արդարեւ այդ ներուժին շնորհիւ ունեցաւ ստեղծագործող գրիչ, որուն արգասիքն եղան իր բազմահատոր գրական-գեղարուեստական գործերն ու բազմահարիւր յօդուած-ուսումնասիրութիւնները, որոնք այսօր իրենց ուրոյն տեղը կը գրաւեն սփիւռքահայ գրական անդաստանէն ներս:

Հպանցիկ ակնարկ մը նետելով Պէպօ Սիմոնեանի 60 տարիներու վաստակաշատ կեանքին՝ հոն պիտի տեսնենք գործունէութեան ընդարձակ եւ բազմարդիւն դաշտ մը: Արդարեւ, սերտած ըլլալով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութիւնն ու առաջադրանքները՝ մուտք գործած էր անոր շարքերէն ներս, դառնալով անոր հաւատաւոր ու նուիրեալ անդամը:

Պէպօ Սիմոնեան մօտէն ուսումնասիրած ըլլալով մայր Կուսակցութեան պատմութիւնը՝ զայն ծանօթացուց նաեւ մեր երիտասարդ սերունդին, պարբերաբար դասախօսութիւններ տալով «Տխրունի» եւ «Իշճանեան» ուսանողական միութիւններու դաստիարակչական եւ հրապարակային միջոցառումներուն:

Իր արդիւնաշատ գործունէութեան համար՝ երիտասարդ տարիքին ընտրուեցաւ Լիբանանի շրջանի՝ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Վարիչ Մարմնի եւ ապա՝ Կեդրոնական վարչութեան անդամ, օգտաշատ ներդրում բերելով վերոյիշեալ մարմիններէն ներս, ծառայութիւն մը որ ամէն գնահատանքէ վեր է:

Կրթա-դաստիարակչական մարզին մէջ՝ Պէպօ Սիմոնեանը եղաւ սիրուած մանկավարժ մը թէ՛ որպէս ուսուցիչ եւ թէ՛ մասնաւորաբար՝ սիրուած տնօրէն Ազգային Ռուբինեան վարժարանի եւ ապա Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի:

Այսօր զոյգ հաստատութիւններու բազմահարիւր շրջանաւարտներն ու նախկին սաները երախտապարտութեամբ կը յիշեն իրենց երբեմնի նուիրեալ եւ սիրեցեալ տնօրէնը:

Լիբանանահայ գաղութի մշակութային կեանքին մէջ իր ուրոյն տեղը ունեցաւ նաեւ Պէպօ Սիմոնեանը նախ իբրեւ ատենապետ «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան եւ ապա՝ իբրեւ տնօրէն Հ.Կ.Բ.Մ.ի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի: Իր նախաձեռնած բաձրորակ գրական-գեղարուեստական միջոցառումներն ու համագաղութային բնոյթի հանդիսութիւնները մեծապէս գնահատուեցան իրենց մատուցման ձեւին ու որակին համար:

Ս.Դ.Հ.Կ.ի եւ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան կոչին անսալով՝ Պէպօ Սիմոնեան եւ Տօքթ. Արշակ Գազանճեան 1985 թուականին, Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Լիսէի ի նպաստ, երեք շաբթուան հանգանակային յատուկ առաքելութեամբ, ուղեւորուեցան տարբեր երկիրներ: Անոնք Անգլիոյ, Գանատայի եւ Ա.Մ.Ն.-ի զանազան հայաշատ կեդրոններուն մէջ հանգանակութիւններ կատարելով շօշափելի արդիւնքով մը Պէյրութ վերադարձան, ամոքելու համար ֆինանսական տագնապի մէջ տուայտող կրթական հաստատութիւնը:

Պէպօ Սիմոնեան իր բարի, ազնիւ, անշահախնդիր ու արդիւնաւէտ գործունէութեան համար՝ սիրուեցաւ թէ իր անմիջական շրջապատէն եւ թէ հայ գաղութի բոլոր կազմակերպութիւններէն: Ան՝ իր կենդանութեան, ըստ արժանւոյն գնահատուեցաւ թէ՛ իր կուսակցութեան եւ թէ՛ Մայր Հայրենիքի եւ Լիբանանի քաղաքական թէ՛ կրօնական հաստատութիւններէն:

Թող Պէպոյի յիշատակն անթառամ մնայ: Փունջ մը ծաղիկ իր շիրիմին:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն խնդրւում է զանգահարել՝
(626) 398-0506

# ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ԸՆԿԵՐՍ



Հ.Մ.Մ.-ի ակումբին դիմաց, Փարամազի արձանին մօտ, ներկայութեամբ Ս.Դ.Հ.Կ.ի ղեկավարութեան, ուր կ՛երեւին Պէպօ Սիմոնեան, Արսէն Կիտուր, Յարութիւն Կուժունի, Աշոտ Պատմագրեան, Աւետիս Տէմիրճեան, Օննիկ Ճամպուլեան, Ժիրայր Նայիրի, Սարգիս Պալայեան

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ

Նախկին ատենապետ Հ.Մ.Մ. Պէյրութի շրջանի եւ Կեդրոնական Վարչութեան Ընկեր Պէպոյին հետ մեր մտերմութիւնը բնական զարգացումն էր մեր երկու ընտանիքներուն Իսկենտերունի մէջ ունեցած բարեկամութեան ու այդ պատճառաւ ալ իմս եղած էր մեծ եղբօր հոգածու վերաբերմունքը իրեն հանդէպ: Պատանի տարիքին ան ընդգրկուեցաւ ուսանողական շարքերէն ներս, երբ ես պատասխանատու էի: Այնուհետեւ քաջալերեցի զինք որ Սահակեան Շրջանաւարտից Միութեան թատերական կեանքին մաս կազմէր ու որպէս բեմադրիչ իրեն վստահեցայ «Կեղծիքի Իշխանուհին» թատերախաղի գլխաւոր Սթավրոյի դերը: Ու այդ հանդիսացաւ իր առաջին բեմ ելլելու փորձառութիւնը: Նոյն ժամանակաշրջանին իր մէջ հետզհետէ դրսեւորուեցաւ բանաստեղծական եւ գրական հետաքրքրութիւնները եւ բնականաբար ներգրաւուեցաւ «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան գործունէութեան մէջ:

Ուսուցչական ասպարէզին նկատմամբ իր մասնաւոր սէրը, զինք առաջնորդեց դառնալու նախ ուսուցիչ եւ ապա տնօրէն Ռուբինեան Ազգային վարժարանի: Հուսկ ապա Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական մարմնի որոշումով հրաւիրուեցաւ վարելու Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի տնօրէնութիւնը: Երբ Պէպօն ստանձնեց տնօրէնութիւնը նոր շէնքին մէջ, դպրոցը ունէր մանկապարտէզէն մինչեւ 6-րդ դասարան: Ան տարուէ-տարի դասարաններ աւելցնելով, դպրոցը օժտեց երկրորդական վարժարանի մինչեւ Բ. Պաքալորիայի դասարանով: Իմ զաւակներս Հուրիկն ու Համբիկը իր աշակերտները ըլլալու բախտաւորութիւնը ունեցան: Համբիկը երախտագիտութեամբ կը յիշէ իր ուսուցչին ու տնօրէնին ունեցած խոր ազդեցութիւնը իր մտաւորական եւ հասարակական կազմաւորման վրայ:

Սահակեանի իր տնօրէնութեան տարիները գրեթէ ամբողջովին պատերազմի տարիներ եղած են: Շրջանի անապահովութիւնը պարտադրեց որ ան յաճախ աշակերտութիւնը փոխադրէ քոյր հաստատութիւններու յարկերէն ներս, որպէսզի աշակերտները չկորսնցնեն ուսումնական տարեշրջանը: Հակառակ պատերազմին պատճառած քանդումներուն՝ ան տեւաբար լծուեցաւ քանդուածը շինելու, ինչ-ինչ դժուարութիւններով գումարներ ապահովելով նորոգութիւններ իրականացնելու համար: Ան առանձինը դիմադրեց այդ բոլորին, երբ շատ յաճախ հաստատութեան խնամակալ մարմինները պատերազմական շրջանին կը բացակայէին քաղաքէն: Պէտք է նշել, որ Պէպօ Սիմոնեան հետամուտ եղաւ իր տնօրէնութեան 20 տարիներուն Սահակեանի կրթական մակարդակը միշտ բարձր պահելու եւ պետական Պրէօվէի եւ Պաքալորիայի քննութիւններուն նշանակալի յաջողութիւններ արձանագրելու: Որպէս ատենապետ «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան, տասնեակ տարիներ համագաղութային առումով բարձրորակ գործունէութիւն ծաւալեց՝ գրական գեղարուեստական որակաւոր ձեռնարկներու ընդմէջէն:

Իր անբասիր նկարագրով, ուղղամտութեամբ եւ արդարամտութեամբ գործեց կուսակցութեան շարքերուն մէջ, հասնելով ղեկավար պաշտօններու Լիբանանի շրջանի Վարիչ Մարմնի եւ Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական վարչութեան եւ դիւանի անդամ ու որպէս ատենադպիր:

Պէպօ Սիմոնեանի հետ իմ գործակցութեանս բազմաթիւ դրուագներէն մէկը կ՛ուզեմ վերյիշել: Կուսակցութեան մէջ յառաջացած անհասկացողութիւններու պատճառաւ ճեղք մը ստեղծուած էր ու բաժանում: Պէպոյին եւ ինծի յանձնուեցաւ պարտականութիւնը՝ գետին պատրաստելու եւ կողմերը քով-քովի բերելով ստեղծելու համախոհութիւն եւ համագործակցութիւն: Մենք երկուքով կրցանք հասնիլ ցանկացած արդիւնքին՝ ի շահ մեր կուսակցութեան առողջ յառաջխաղացքին ու վերելքին:

Եւ վերջապէս՝ կարելի չէ խօսիլ Պէպօ Սիմոնեանի մասին, առանց յիշատակելու իր կողակիցը Ազատուհին, որուն հետ իր կազմած մտաւորական ու գաղափարական ընտանիքը զօրավիգ հանդիսացաւ իր բոլոր գործունէութիւններուն:

Իսկ զաւակները՝ Տիգրանն ու Ռազմիկը պատրաստուելով իրենց ծնողաց շունչին տակ, իրենց ասպարէզէն ներս գտած յատկանշական յաջողութիւններէն անկախաբար, ընդգրկուեցան նաեւ Լիբանանի եւ Տուպայի կրթական, բարեսիրական, ազգային ու եկեղեցական ծառայութեան մէջ:

Թող յիշատակդ վառ մնայ սերունդներու յիշողութեան մէջ, սիրելի ընկեր Պէպօ:

# ՌՈՒՍԱՖՈԲԻԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ. ԱՐՄԱՏՆԵՐ «ՎՏԱՆԳՆԵՐ»

«Ռուսաստանի համար Հայաստանը մանրադրամ է» (1in.am, lragir.am):

«Ռուսաստանը ԼՂ-ն յանձնելու գործարք է կնքել Ատրպէյճանի հետ» (norlur.am):

«Ռուսաստանն ու Թուրքիան խնդիր են դրել վերացնել Հայաստանը» (lragir.am):

«Ռուսաստանը շտապ կապիտուլիացիա է պատրաստում Ղարաբաղում» (lragir.am):

«Ռուսաստանը ծրագրում է Հայաստանի պարտութիւնը» (lragir.am):

«Ռուս-ատրպէյճանական դաւադրութիւն՝ ընդդէմ Ղարաբաղի» (168.am):

«Ռուսաստանն ու Թուրքիան բնական դաշնակիցներ՝ ընդդէմ հայ ժողովրդի ազգային շահերի (lragir.am):

«Փորձագէտներ՝ Մոսկուան կարող է փորձել «զոհաբերել Հայաստանի շահերը» (azatutyun.am):

**_ՎԱՀԱՆ ԻՇԽԱՆԵԱՆ_**
**_(Տարբերակուած նախորդ թիւէն)_**

*1916 թուի Սայքս-Պիկոյի պայմանագրով կրկին գրաւոր կնքւում է, որ նեղուցները տրւում են Ռուսաստանին: Սակայն բոլշեւիկեան յեղափոխութիւնը տապալում է պայմանագիրը»:*

*Դարդանելի օպերացիայի մասին lenta.ru-ն գրում է. «Սանկտ-Պետերբուրգում սկզբում մտավախութիւն ունէին Պալքաններում անգլիացիների ակտիւութեան համար, այնպէս, որ բրիտանական կառավարութիւնը նոյնիսկ ստիպուած էր գաղտնի երաշխիքներ տալ, որ ամէն դէպքում պատերազմից յետոյ նեղուցները կ՚անցնեն Ռուսաստանին»:*

*Հնարաւոր է, որ եթէ Անգլիան այդքան արիւն թափելով գրաւէր Դարդանելը, այն չտար Ռուսաստանին:*

*Ռուսաֆոբները միայն Ռուսաստանին են մեղադրում նահանջների եւ հայերին չփրկելու մէջ, սակայն նմանատիպ քաղաքականութիւն են վարել նաեւ միւս դաշնակիցները. Սայքս- Պիկոյի համաձայնագրով Կիլիկիան յանձնուած էր Ֆրանսայի տիրապետութեանը: 1920-ի Յունուարին թուրքական բանակը յարձակւում է Մարաշ քաղաքի վրայ, ուր ապաստանել էին մօտ 30 հազար հայեր: Լէօն նոյնիսկ գրում է, որ ֆրանսական բանակը քաղաքի այն հատուածներում դիրքաւորուեց, որտեղ հայեր չկային, եւ անպաշտպան մնացած 3000 հայեր կոտորուեցին, իսկ այն հայերին, որոնք փախչում էին ապաստան գտնելու ֆրանսացիների մօտ, ֆրանսացի զինուորները գնդակոծում են եւ մօտ 400 հոգի սպանւում[2]:*

*Կիլիկիայում հայկական համայնքները ինքնավարութիւն էին ստեղծում, նոյնիսկ՝ մէկ օրով: 1921թ. Սեւրի պայմանագրից մէկ շաբաթ առաջ մի խումբը Օգոստոսի 3-ին, եւ միւսը՝ 4-ին, Կիլիկիայի Հայաստանը անկախ հռչակեցին: Սակայն ֆրանսական բանակը, ի վերջոյ, հեռացաւ, ու հետն էլ հայերը արտագաղթեցին:*

*Հրանուշ Խառատեանն ասում է. «Շատ քիչ է քննարկւում ֆրանսական դաւաճանութիւնը Կիլիկիայում եւ կիլիկիահայերի երկրորդ ջարդը Մուստաֆա Քեմալի բանակի կողմից»:*

*Դաւաճանութի՞ւն, հակահայ դաւադրութի՞ւն, իհարկէ ոչ, ֆրանսացիների շահերի մէջ հայեր գոյութիւն չունեն:*

*Սոյն թուի Մայիսի 14-ին Լոս Անճելոսում յատուկ հեռուստամարաթոն կազմակերպեց նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամը ժամը 16-22 (6 ժամ), Արցախի բանակի կարիքների համար եւ հաւաքուեց 1,102,357 դոլլար:*

*Թող մեզ ներեն հանգանակութիւն կատարողները, որոնց բոլորի անունները չենք նշել այս յօդուածում: Նկատի ունենանք, որ հանգանակութիւններով կամ հեռուստամարաթոնով դրամ հաւաքելը պահի հրամայականն է եւ չի շարունակւում:*

*Մի խումբ մարդիկ Հայաստանի բարիքները իւրացնելով եւ հսկայական հարստութիւն դիզելով, հաւատքի նշոյլ անգամ չեն թողել ժողովրդի մէջ, որի հետեւանքով Հայաստանը դատարկւում է: Բայց հայը ունենալով իւրայատուկ գեն, անքակտելի կապերով կապուած լինելով իր Հայրենիքի ու Սուրբ հողի հետ, Հայրենիքից դժգոհ հեռացած (արտագաղթած) հայերի գերակշռող մասը շուտափոյթ օգնութեան է հասնում Հայրենիքին: Իր Հայրենիքը հայի համար իւրայատուկ, անբացատրելի, իրեն անսահման ուժ տուող երեւոյթ է, որը նա զգում է իր հոգում ու երակներում եւ անհրաժեշտութեան դէպքում պատրաստ է կեանքը նուիրել նրա յարատեւութեան համար: Դրա համար էլ այն գրում եմ գլխատառով:*

*Անկախ յօդուածում ներկայացուած հանգամաքներից, որոնցից շատերը շատ հայրենակիցներին ընդվզման են հասցնում Հայաստանի առանձին ղեկավարների դէմ, բայց այդ ընդվզող հայրենակիցները շարունակում են իրենց օգնութիւնը Հայրենիքին:*

*Հայրենիքի նեղ օրերին նրան փրկողը միշտ էլ եղել է հասարակ ժողովուրդը, որ ունեցած-չունեցածը նուիրել է Հայրենիքին՝ իր անձի հետ միասին: Եթէ ցականում ենք, որ Հայրենիքը գոյատեւի, ապա անյապաղ միջոցներ ստեղծենք նրա բանակը հզօրացնելու համար: Ուստի, եկէք խոստովանենք, որ առանց կազմակերպուած ընդհանուր ղեկավարութեան, տարբեր տեղերում կատարուած հանգանակութիւններով մեր նպատակին լրիւ չենք կարող հասնել: Նրանց գործունէութեան զուգահեռ, պէտք է շուտափոյթ ստեղծել «ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ ՄԻԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱՆԱԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»: Այն պէտք է ստեղծուի հայկական լուրջ կազմակերպութիւնների, կուսակցութիւնների, յարանուանութիւնների, երեւելի եւ կշիռ ունեցող անհատների միասնական կազմակերպչական ջանքերով, որն ունենայ իր ծրագիր-կանոնագիրը եւ գրասենեակները հայկական սփիւռքի ողջ տարածքում: Այն պէտք է լինի մնայուն եւ գործի անժամանց: Զմոռանանք, որ Ազգային տուրքի գործունէութիւնը իրականացնող կազմակերպութիւնը մէջտեղ բերելու համար անհրաժեշտ են դրամական միջոցներ, ուստի նաեւ՝ հովանաւորներ: Ազգային տուրքը չպարտադրել ժողովրդին՝ գումարներ առաջարկելով իւրաքանչիւր անձի կամ ընտանիքի համար, այլ թողնել, որ իւրաքանչիւրը ինքը որոշի, թէ որքան կարող է նուիրաբերել: Սա աւելի արդիւնաւէտ կը լինի, որովհետեւ մարդը իր խոստումը կը կատարի աւելիով՝ յաճախ էլ իր խոստացածից աւելի նուիրելով: Մնում է, որ գրասենեակները ամէն ամիս վճարումների մուրհակներն ուղարկեն տուրք վճարող յանձնառուներին, որոնք բարեխղճօրէն կը վճարեն խոստացած գումարները: Բնականօրէն, նախօրօք բոլորին ուղարկել պատրաստուած անդամութեան ձեւը: Այս ձեւով Ազգային տուրքը ամուր հիմքերի վրայ կը դրուի եւ Հայկական բանակը Հայաստանում եւ Արցախում կ'ունենայ անհրաժեշտ հսկայական դրամագլուխ՝ իր կարիքներին բաւարարելու համար, առանց ողորմութիւն խնդրելու, որ ինչ-որ մէկը պատերազմի թէժ պահին դրամ կամ դրամ տալու խոստում կատարի…: Իսկ հաւաքուած գումարները, որպէս բանակի հիմնադրամ, պէտք է յանձնուի միայն ու միայն պաշտպանութեան համակարգում ստեղծուած վստահելի յանձնախմբին: Այսպիսով բանակը կը հզօրանայ վստահութեան երաշխիք ունենալով եւ հոգսերից ազատուած, աւելի կ'ամրապնդուի ու կբարձրանայ բանակում ծառայողի նուիրուածութիւնը իր գործին:*

*Ազգային տուրքի առաջարկուած ձեւը պայմանական է, բայց յուսալի, քանի որ այն իրականացուելու է առանց պարտադրման: Միգուցէ տարբեր լուծումներ կ'առաջարկուեն ընթերցողների կողմից, որոնք կը քննարկուեն ստեղծուած կազմակերպութիւնում եւ կ'որոշեն տուրքի գանձելու ձեւը:*

*Եկէք ընդունենք այս յօդուածում նշուածը որպէս առաջարկ եւ արձագանքենք ու քննարկենք Ազգային տուրքի ճիշտ կազմակերպման, նրա կազմակերպութեան ստեղծման հարցը եւ շուտափոյթ գործի լծուենք, որովհետեւ իւրաքանչիւր րոպէն մեր բանակների ամրացման ու զինամթերքով ապահովման համար շատ կարեւոր նշանակութիւն ունի: Նկատի ունենանք, որ ես միայն գաղափարը յուշեցի, որը նոր չէ, եւ շատ անգամ է շօշափուել մեր մամուլում: Բայց այժմ պէտք է գործել վճռականօրէն ու իրականացնել այն, մեր բանակը հզօրացնելու եւ Հայաստանի գոյատեւումը ապահովելու համար: 600 տարի պետականութիւնից զրկուելուց յետոյ, այսօր անկախ պետականութիւն ունենք, հպարտանանք նրանով ու աշխատենք գուրգուրալով պահ-պանել այն դէպի եկող դարերի խորքը տանող ճանապարհին:*

*Հայերս հաւատացած ենք, որ դեռ շատ անելիքներ ունենք այս երկրագնդի վրայ՝ մեր հնագոյն մշակոյթը սփռելու ամէնուր եւ որոշ վայրագ ցեղերին քաղաքակրթելու համար:*

*Փա՛ռք մեր անկախ Հայրենիքին:*

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

# ՄԵՐ ՏՂԵՐՔԸ



ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

*Արցախեան քառօրեայ պատերազմէն անմիջապէս ետք. Երեւան կը գտնուէի Ռամկավար Ազատական Կուսակցութեան մէկ համագումարին մասնակցելու: Երբ Համաժողովի պաշտօնական աշխատանքները աւարտած էին, տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ-խրախճանքը, մասնակցութեամբ Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն ժամանած պատգամաւորներու: Արցախեան քառօրեայ պատերազմին զոհուած նահատակներու արժանի յարգանքը պահ մը լռութեամբ եւ յուզիչ ելոյթներով մատուցանելէն ետք, ազգայնական ոգեշունչ երգերը կը կէտադրէինք Կուսակցութեան պանծացումի մաղթանքներով, մեր նորօրեայ հերոսներուն եւ նահատակներուն հանդէպ պատշաճ կենացներով եւ բաժակաճառերով: Մթնոլորտը շատ «տաք» էր, խանդավառ եւ ուրախ:*

*Առաւօտեան փոքր ժամերուն, քանի մը ընկերներով պանդոկ պիտի վերադառնայինք: Որոշեցինք քալել: Օդը շատ նպաստաւոր էր, տրամադրութիւնները՝ բարձր, գլուխները՝ տաք: «Հօտառութեամբ» քանի մը փողոց քալելէն ետք, երեք պատանի-երիտասարդներու հանդիպեցանք եւ որպէսզի սխալ ուղղութեամբ չքալէինք, Օփերայի շէնքին կամ Արմենիա Հրապարակին ճամբան հարցուցինք: Քանի մը փողոց եւս քալելէն ետք, երբ տղաքը տեսան որ կը տատամսէինք, «մենք գալիս ենք ձեզ հետ» ըսին եւ սկսան մեզի հետ քալել: Երբ իրենց ով ըլլալը հարցուցի, ըսին որ բանակայիններ են: Զարմանալով զարմացայ ... :*

*Արտաքնապէս հազիւ 16-17 տարեկանի երեւոյթ ունեցող այս փոքրակազմ տղաքը ուրեմն 18 տարեկան էին եւ երբ հարցուցի որ ու՞ր էին Արցախի քառօրեայ պատերամի ժամանակ, «ճակատու՛մ, խրամատներու՛մ» եղաւ իրենց պարզ՝ բայց շեշտակի պատասխանը: Իրենց պատասխանելու ոճին մէջ զգացինք հպարտանքը Հայրենիքի Պաշտպանը ըլլալու պատիւին: Պահը շատ յուզիչ էր: Ուրեմն այս պատանիները հոն էին, կենաց եւ մահուան գուպարին մէջ մեր ոխերիմ եւ մահասփիւռ թշնամիին դէմ:*

*Մեր այս պաշտելի «տղերք»ը պատմեցին մեզի թէ ինչպէ՞ս կռիւի այդ առաջին օրուան տաք պահերուն մինչ իրենք մէկ կողմէն ազերի շուները կամ վարձկան հրոսակները կը «սատկացնէին», առաջին գիծի գինուորներուն փամփուշտները սպառած են ... : «Փամփուշտ ուզում էինք, մեզ ասում էին սպասէք մի քիչ էլ: Շտապ փամփուշտ ուզում էինք, ասում էին վտանգաւոր ա, մի քիչ էլ դիմացէք:» Եւ այսպէս մեր նորօրեայ հերոսները «խրամատներում» ստիպուած էին «սպասել եւ դիմանալ» մինչեւ որ փամփուշտները հասնէին, փամփուշտներ՝ որոնք հոն պէտք էր եղած ըլլային, որը սակայն չկային: Փամփուշտներ, որոնք շտապ պէտք էր հասնէին, սակայն չհասան, քանի որ մեծերուն համար «վտանգաւոր» էր առաջին գիծերուն խրամատները հասնիլը:*

*«Մեր շուրջ մեր ընկերները խփւում էին, ընկնում, մենք կրակում էինք» ըսին տղաքը: Եթէ, ըսին, բաւարար փամփուշտ եւ նռնակ ունենայինք, տասնեակներով աւելի թուրք կը խփէինք: Փամփուշտները որ վերջացած են, տղաքը ստիպուած եղած են զէնքի կոթերով կռուիլ եւ նահատակուիլ: «Մենք կռւում էինք մեր Հայրենիքը, մեր տունը պաշտպանելու: Գիտէինք որ եթէ թուրքերը մեզմէ անցնէին, մեր մայրերը պիտի &*%$# , մեր քոյրերը պիտի &*%$# : Ո՞նց կրնայինք թողնել այդ: Սատկացնելու էինք»:*

*Սարսափելի էր: Ուրեմն, 25 տարի պատերազմական վիճակի մէջ ըլլալ, մանաւանդ վերջին ամիսներուն օրէ օր գինադադարը աւելի ուժգնութեամբ խախտուէր, եւ մեր առաջին գիծերուն վրայ եղող գինուորները բաւարար փամփուշտ չունենային Հայրենիքը պաշտպանելու: Ըստ այս հերոսներուն, եթէ ըսին, մենք բաւարար փամփուշտ ունենայինք, այդքան զոհ չէինք տար եւ թուրքերը չէին կրնար այդ գիծերը գրաւել:*

*Եւ այս սքանչելի տղաքը քանի մը անգամ «Բանամերա» պոռոտալին վրայ յանկարծական կը պոռային «Ո՞վ ես դուն, - Հա՛յ եմ ես, Ի՞նչ կ'ուտես դուն, - Օձի գլուխ, - Ի՞նչ կը խմես դուն, - Թուրքի արիւն, - Վա՜յ մայրիկ ճան վա՜յ, հազար անգամ թուրքին վա՜յ»:*

*Եւ այսպէս, խօսելով, խնդալով եւ երգելով հասանք Արմենիա Հրապարակը: Տղաքը ըսին որ մէկ օր եւս արձակուրդ ունին եւ միւս օրը բանակ պիտի վերադառնան: Երբ հարցուցի -Ու՞ր պիտի երթաք, -մեր փոստերը, -ըսին, այսինքն, առաջին գիծի խրամատները:*

*Նախքան մեր բաժանումը, խնդրեցի որ առաջարկած փոքր նուէրս ընդունին եւ յաջորդ օրը ընկերներով ճաշարան երթան եւ լաւ «քէյֆ» մը ընեն: «Չմոռնաք մեր կենացն ալ խմելու» ըսի, կէս կատակ, կէս շիտակ: «Ցաւդ տանեմ, ոնց չենք խմեր» եղաւ իրենց պատասխանը:*

*Եւ հիմա, արդեօք այդ տղաքը*

*Շար.ը էջ 19*

# ՀԵՔԻԱԹ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՒ ՆՐԱ ԵՐԵՔ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՕՂՕՍ ԱՐՄԵԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

*Ձմեռ էր, մութն էր պատել իրենց քաղաքը, իրիկունները երկա՜ր-երկա՜ր: Մանչերը տատիկից խնդրել էին հեքիաթ պատմել իրենց: Տատիկը նրանց հաւաքել էր իր շուրջ բոլորը, սկսել էր պատմել իր իմացած բազում-բազում հեքիաթներից մէկն ու մէկը: Այսպէս էր նա խօսել:*

*-Շատ հին ժամանակներին, լինում է չի լինում մի փոքրիկ երկիր ու թագաւոր է լինում: Իրենց երկրի քաղաքն էին կառուցել երկւորեակ գետերի աջ ու ձախ կողմերին: Ընդարձակ դաշտեր էին նրանց քաղաքի շուրջ բոլորը: Նրա բնակիչները, աշխատասէր ու խաղաղ մարդիկ էին: Դաշտերի հողը ամենաքինն էր, այն փորում էին սուր գործիքներով, հեռուներից բերած տարբեր տեսակների հունտեր էին հողին տալիս: Դաշտերն էին ոռոգել ջրառատ գետերի պաղ ջրերով: Տարբեր պտուղների պարտէզներ կային այնտեղ, աշնանը առատ բերք էին հաւաքում, նրանց մի մասը չորացնում, որ ձմրանը օգտագործէին: Նրանք բարի ու բարեպաշտ մարդիկ էին, շատ աստուածների էին պաշտամունք նուիրում, կամարակապ սիրուն տաճարներ էին պատել... աղիւսով, այնտեղ ժայռոտ լեռներ չկային, քար չկար: Առատութիւն էր երկրում, հաւատում էին, որ իրենց բարի աստուածներն էին այն պարգեւում:*

*- Թագաւոր ունէին, այն անչափ արդար էր թագաւորում, չկար հարուստ ու աղքատ, բոլորը հաւասար էին: Դաշտերում հասունացած բերքը, դաշտերի ուտելի բոյսերը միասին էին հաւաքում, չորացնում ապա ամբարում ընդհանուր պահեստարաններում: Համայնքի տարբեր մարդկանց սեփականութիւնը չէր այն, հաւասարապէս բոլորինն էր: Ամբարած բերքից ուտելիք էին պատրաստում, թագաւորի հետ բոլորը միասին էին սեղան նստում, երգում, պարում, զուարճանում: Հէքիաթային երկիր էր, չկար իմն ու քոնը...:*

*-Իրենց քաղաք-պետութիւնում շատ բարի թագաւորներ էին իշխել: Նրանցից վերջինը տարիքոտ էր, արդէն ծերունի: Զգալով մօտալուտ մահը, ցանկացել էր անմահ լինել: Ունեցել էր երեք հասուն տղաներ, ձեզ նման բազում անուշ թոռներ: Կանչել էր քաջ ու յախուռն աւագ տղային, յորդորել գնալ ուրիշ աշխարհներ, անմահութեան գաղտնիքը որոնել:*

*-Աւագ տղան զինուել էր թուր ու գրահով, հեծել թամբած ձին, թագաւոր հայրը ու քաղաքի մարդիկ նրան ճանապարհ էին դրել, մաղթել, անմահութեան գաղտնիքը գտած երկիր վերադառնալ: Ձին քամու նման սուրում էր իրենց երկրի արեւելեան կողմն աշխարհի ճամբաներով: Հասել ջրառատ գետեր, ձին լողալով դիմացի ափեր էր տարել իրեն, թռել կիրճերի վրայով, անցել ձիւնոտ գագաթներով լեռներով: Իր ճանապարհին կռուել վիշապների, չարքերի հետ: Հասել մի երկիր, որտեղ սիրուն տաճարներ էին: Խնդրել էր իրեն տանէին տաճարի մեծի մօտ: Տղան նրան պատմել էր իրենց քաղաքի ու նրա բնակիչների մասին, պատմել թագաւորին անմահութիւն շնորհելու գաղտնիքի որոնման փափաքի, պատմել անցած դժուարին ճանապարհի արկածների մասին: Տաճարի մեծաւորը, մտախոհ գլուխն օրօրելով ասել էր, որ աշխարհում ամէն ինչ ունի սկիզբ ու վախճան, ոչինչ կայ յաւերժ, աստուածներն էլ անմահ չեն, նրանց փառաբանումը դարեր է գնում, յետոյ էլ խամրում: Յորդորել էր ետ վերադառնալ իր երկիր:*

*-Քաղաքի մուտքի մօտ, թագաւոր հայրը, քաղաքի բնակիչները ուրախ բացականչութիւններով դիմաւորել էին նրան: Տղան իջել էր ձիուց, ծնկի իջած խոնարհել հօրը, պատմել նրան, որ հասել էր բազում աշխարհներ, անհնար էր եղել գտնել անմահութեան գաղտնիքը:*

*Թագաւորը, պալատ էր կանչել միջնեկ տղային, յորդորել գնալ ուրիշ աշխարհներ, որոնել իմաստուն մարդկանց, խնդրել նրանց յայտնել անմահութեան գաղտնիքը: Զինակիր տղան հեծել էր ձին, չարքերից փրկուելու համար թալիսման կախել վզից, քամու արագութեամբ սուրացել դէպի արեւմտեան կողմն իրենց աշխարհի: Չարքերը, կտրել էին նրա ճանապարհը, ուզեցել էին վզից պոկել թալիսմանը: Ահեղ կռիւ էր եղել, վզից կախած թալիսմանը կուրացրել էր նրանց: Լայնահուն գետեր ու ձիւնոտ լեռներ էին ճանապարհին, հէքիաթային ձին թռել էր նրանց վրայով, անցել լեռներով, բարձրացել ամպերի վրայ, դիտել աշխարհը, տեսել հեռու մի երկրի տարածուն քաղաք: Ձիու թաց բաշերը պինդ բռնած՝ խնդրել նրան տանել ոչ թէ արեւ, այլ վար իջեցնել, որ գնար այդ քաղաք: Նրանց մարդկանց հարցրել էր, ո՞րտեղ են ապրում իրենց իմաստուն մարդիկ: Նրան տարել էին մի մեծ ծառի շուաքի տակ հաւաքուած մարդկանց մօտ: Թասերով գինի էին խմում, ոտքի կանգնած խօսում, հակաճառում իրարու, խօսում իրեն համար անծանօթ բաներից: Տղան նրանց պատմել էր, որ եկել էր հեռու մի աշխարհից անմահութեան գաղտնիքը որոնելու: Նրան ընդառաջ էր եկել փառահեղ տեսքով սպիտակամօրուս մի ծերունի: "Տղաս" կանչել էր նա՝ "Անմահութիւնը՝ գինու պատճառած վայելքի հրճուանքն է, անմահը՝ իմաստունների արարած գիրն է, անմահութիւնը՝ ցեղի ու գերդաստանի հազար-հազար տարիների յարատեւումն է": Քաղաքի մեծաւորը, որթատունկի տնկիներ էր տուել նրան, տանել հօրը նուիրելու:*

*Վերադարձել էր երկիր, հօրը պատմել էր իմաստունների խօսքը, նրան տուել իր հետ բերած խաղողի որթատունկի տնկիները, իրենց դաշտում ցանէին, խաղողից գինի քամէին, վայելէին նրա բուրմունքը, համը, նրա արթնած երեւակայութեան ճախրանքը, նրա պատճառած յախուռն քաջութեան ոգին, գազանների հետ մենամարտէին, պատռէին նրանց երախները:*

*Թագաւորը կանչել էր անչափ խելացի ու շատ սիրելի Արմին անունով փոքր տղային, թելադրել գնալ դէպի հիւսիսային կողմն աշխարհի, գուցէ այնտեղ գտնէր անմահութեան գաղտնիքը:*

*Արմին տղան, ցուպը ձեռքին, խուրջինը ուսից կախած ճանա-*

*Շար.ը էջ 19*

## 5 ՄԹԵՐՔ, ՈՐՈՆՔ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ԹՈՒՆԱԶԵՐԾԵՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ, ՔԱՆ ՈՐԵՒԷ ԱՅԼ ԴԵՂԱՄԻՋՈՑ

*Մարմինը թունազերծելու կամ «մաքրելու» համար այժմ ստեղծուած են բազմաթիւ դեղամիջոցներ, սակայն մինչեւ վերջին նորամուծութիւնները միշտ եղած են մթերքներ, թուրմեր կամ աւանդական միջոցներ, որոնցմով հնարաւոր եղած է թունազերծել մարմինը: Շարք մը մթերքներու մէջ կան մարմինը «մաքրելուն» օգնող օգտակար նիւթեր ու հանքանիւթեր, որոնք ամբողջութեամբ կրնան փոխարինել յատկապէս քիմիական բաղադրութեամբ դեղամիջոցները: 5 մթերք, որոնք օգտագործելէ յետոյ ձեր մարմինը կը դառնայ «նորածին»:*

**Ճակնդեղ**

Ճակնդեղը մարմնի թիւ մէկ մաքրուհի է: Անիկա կը պարունակէ բջջանք (ֆայպըր), ֆոսֆոր, վիթամին C եւ շարք մը այլ օգտակար նիւթեր, որոնք կը նպաստեն մարմնէն աւելորդ ու անպէտք մնացորդներու չէզոքացման: Ճակնդեղը կը մաքրէ ստամոքսն ու աղիքները: Անիկա նաեւ կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կ'օգնեն լեարդին ազատելու թոյներէ:

**Կաղամբ**

Կաղամբը կը պարունակէ մեծ քանակութեամբ սննդային հիւսուածքներ, որոնք կ'օգնեն մարմնին իրար միացնելու սննդային ծանր մետաղներն ու թոյները եւ դուրս հանելու զանոնք աղիքներուն միջոցով: Կաղամբի բաղադրութեան մէջ կը մտնեն կենսական թթուներ, որոնք կը բարելաւեն ստամոքսին եւ աղիքներուն աշխատանքը: Կաղամբը նաեւ ունի բացառիկ վիթամին U, որ կը չէզոքացնէ վտանգաւոր քիմիական նիւթերը եւ ստամոքսի խոցի պարագային քիչ, թէ շատ կը նպաստէ, որ վէրքը փակուի:

**Սխտոր**

Սխտորը կը պարունակէ աւելի քան 400 օգտակար նիւթեր ու տարրեր: Առաջին հերթին անիկա հիանալի միջոց է արեան մէջ քոլեսթերոլի մակարդակը իջեցնելու համար:

Սխտորը կը մաքրէ երակները, կը չէզոքացնէ թոքախտի ցուպիկը: Սխտորի միջոցով կարելի է պայքարիլ աղիքներուն մէջ յայտնուող որդերուն դէմ: Անիկա զանոնք դուրս կը շպրտէ կալի հետ միասին:

**Սոխ**

Սոխին գլխաւոր արժէքը ֆիդոնցիտն է, որմով հարուստ են նաեւ եթերային իւղերը: Ֆիդոնցիտի միջոցով սոխը կը կատարէ հակաթոյն այնպիսի պաշտօն, որ նոյնիսկ չեն կրնար ամենալաւ դեղամիջոցները: Սոխը նաեւ կը բարելաւէ մարսողութիւնը, կ'օգնէ ստամոքսին առանց ծանրաբեռնուածութեան ու արագ «մաշեցնելու» ճաշը:

**Խնձոր**

Խնձորը կը պարունակէ մեծ քանակութեամբ փեգդին եւ բջջանք (ֆայպըր), որոնք կը կարգաւորեն ստամոքսի եւ աղիքներու աշխատանքը: Խնձորը նաեւ կը նպաստէ ստամոքսահիւթի արտադրութեան եւ կ'ազատէ փորկապութենէ:

Խնձորին միջոցով կարելի է պայքարիլ այնպիսի վարակներու դէմ, ինչպէս A խումբի վարակները, սդաֆիլագոգը, տիզենթերիան եւ բրոդէյը:

Ըստ սննդագէտներու՝ այս մթերքները աւելի լաւ կը թունազերծեն մարմինը, քան որեւէ այլ դեղամիջոց: Անոնք նաեւ կը պարունակեն շարք մը կենսանիւթեր, որոնք կը նպաստեն մարմնի դիմադրողականութեան բարձրացման:

## ԾՈՎՈՒ ԱՂԻ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ծովու աղը օգտակար ուտելիք է, որ կարելի է օգտագործել բազմաթիւ հիւանդութիւններու բուժման եւ կանխարգիլման համար: Արդէն 4000 տարի է, որ ծովու աղը կը հանդիսանայ ովկիանոսներու եւ ծովերու ափերուն ապրող ժողովուրդներու ուտելիքի անբաժան մասը: Զայն կը ստանան արեւային ջերմութեան եւ քամիի ազդեցութեամբ՝ գոլորշացման շնորհիւ:

Ծովու աղի կազմը եւ օգտակար յատկութիւնները աղերու պակասը կը նպաստէ նիւթափոխանակութեան խանգարման, նաեւ կը յանգեցնէ լուրջ փոփոխութիւններու, որոնք կարիք ունին բժշկական միջամտութեան: Ծովու աղի կանոնաւոր օգտագործումը կը նպաստէ տուեալ խնդիրներու լուծման, քանի որ անիկա կը պարունակէ հետեւեալ նիւթերը. Մակնեզիում՝ ջղային համակարգի բնականոն գործունէութեան համար անհրաժեշտ տարր: Անոր պակասը կ'արագացնէ ծերացման ընթացքը:

Կալիում՝ կը պահպանէ աղաջրային հաւասարակշռութիւնը, նաեւ անհրաժեշտ է սրտի բնականոն աշխատանքի համար:

Եօտ՝ անփոխարինելի տարր, որ կը պահպանէ մարմնի հորմոնալ հաւասարակշռութիւնը: Եօտը անհրաժեշտ է վահանագեղձի գործունէութեան համար, քանի որ կը մտնէ անոր հորմոններու կազմին մէջ:

Երկաթ՝ հեմոկլոպինի անբաժանելի մասը, որ կը մասնակցի թթուածինի տեղափոխման:

Պղինձ՝ կը մասնակցի արիւնաստեղծ գործունէութեան եւ կը կանխէ անեմիայի զարգացումը:

Մանկանէզ՝ կ'ամրացնէ դիմադրողական համակարգը եւ յենաշարժական կարգը, քանի որ ընդգրկուած է ոսկրագոյացման գործընթացին մէջ:

Սելենիում՝ կ'ամրացնէ մարմնի դիմադրողական համակարգը:

Քրեմնիում՝ անօթներուն կը հաղորդէ առաձգականութիւն:

Պրոմին՝ ջղային համակարգին վրայ հանգստացնող ազդեցութիւն ունի:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## ՆՈՒՌԻ 7 ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Նուռի օգտակար յատկութիւններուն մասին առասպելներ կը պատմուին: Կ'ըսուի, որ եթէ պարբերաբար նուռ ուտէք, ձեր սիրտը կ'աշխատի ժամացոյցի նման, իսկ ծերութիւնը ձեզի կը հասնի շատ աւելի ուշ, քան դուք կը սպասէիք:

Նուռը կը պարունակէ 12 ամինաթթուներ, որոնց 5-ը անփոխարինելի են: Այսինքն դուք զանոնք չէք գտներ այլ պտուղներու մէջ: Նուռը նաեւ հարուստ է K, C, B9 եւ B6 կենսանիւթերով, ինչպէս նաեւ հանքանիւթերով՝ ֆոսֆորով եւ կալիումով: Ասոնց հետ մէկտեղ նուռը ցած ջերմուժ ունեցող պտուղ է:

Նուռի 7 օգտակար յատկութիւնները.

1. Նուռը կ'ամրապնդէ սիրտը: Նուռը կը պարունակէ պունիկալագին ու մեծ քանակով հակաթոյներ, որոնք մտնելով մարմնի մէջ կ'ամրապնդեն սիրտը: Մասնագէտներու խօսքով, պունիկալագինը եւ հակաթոյները կ'ամրացնեն երակներուն պատերը եւ կ'իջեցնեն վատ քոլեսթերոլի մակարդակը:

2. Նուռը կը պաշտպանէ քաղցկեղէն: Նուռը կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կը խոչընդոտեն չարորակ գոյացութիւններու ձեւաւորումը: Նուռին մէջ գտնուող հակաթթուները եւ հակաբորբոքային նիւթերը թոյլ չեն տար զարգացումը չարորակ գոյացութիւններու բջիջներուն: Հետեւաբար քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը կը նուազի:

3. Նուռը կը բարձրացնէ մարմնի դիմադրողականութիւնը: 100 կրամ նուռը կը պարունակէ 21 տոկոս C կենսանիւթ, որ մարմնին անհրաժեշտ է մէկ օրուան ընթացքին: Նուռը կ'աշխուժացնէ դիմադրողական համակարգը՝ պաշտպանելով մարմինը տարատեսակ վարակներէ: Մասնագէտները կը նշեն, որ օրը մէկ նուռի 6-րդ մասը ուտելու պարագային՝ դիմադրողականութիւնը կը բարձրանայ 3 անգամ:

4. Նուռը կը բարելաւէ մարսողութիւնը: Սննդային հիւսուածքները (fiber), որոնք կը պարունակէ նուռը, այնպիսի տարրեր են, որոնք մարմինը չի մարսեր: Փոխարէնը այդ հիւսուածքները կ'օգնեն չէզոքացնելու ճաշի «անպէտք մնացորդները»: 100 կրամ նուռը կը պարունակէ 16 կրամ սննդային հիւսուածք, որ մարմնին անհրաժեշտ չափաբաժնի ծիրին մէջ է: «Աւելորդութիւններ»-էն ազատիլը կը նպաստէ մարսողութեան համակարգին:

5. Նուռը կը բարձրացնէ հեմոկլոպինի մակարդակը: Հեմոկլոպինը երկաթ պարունակող սպիտակուց է, որ կ'օգնէ մարմնին թթուածինը հասցնելու հիւսկէններուն: Եթէ հեմոկլոպինի մակարդակը ցած է մարդու մօտ՝ սրտխառնուք, գլխապտոյտ եւ թուլութիւն կը նկատուի: Նուռը կը բարձրացնէ հեմոկլոպինի մակարդակը: Անիկա յաճախ խորհուրդ կու տան օգտագործել անեմիայի պարագային: Օրը երեք գաւաթ նուռի հիւթը բաւարար է հեմոկլոպինը կարգաւորելու համար:

6. Նուռը կը կանխարգիլէ մազաթափութիւնը: Մազաթափութեան պատճառներէն մէկն ալ երկաթի պակասի հետեւանքով յառաջացող անեմիան է: Հեմոկլոպինի պակասի հետեւանքով մարմնի հիւսկէնները բաւարար քանակով թթուածին չեն ստանար: Պարբերաբար նուռ օգտագործելու պարագային կ'ամրապնդուին մազի արմատները, կը կարգաւորուի սնուցումը եւ հետզհետէ կը վերանայ մազաթափութիւնը:

7. Նուռը կը կանխարգիլէ արթրոզի յառաջացումը: Արթրոզը տարածուած յօդային հիւանդութիւն է, որու պատճառով կը տառապի աշխարհի բնակչութեան 10 տոկոսը: Արթրոզի հետեւանքով կը բորբոքին յենաշարժական հատուածները եւ կը յառաջանան շարժելու բարդութիւններ: Նուռը կը պարունակէ մեծ քանակով K կենսանիւթ, որ ունի հակաբորբոքային ներուժ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 35 ՏԱՐԵԿԱՆԸ ԱՆՑԱԾ ԿԻՆԵՐՈՒ

1. Որքան ալ երեկոյթը հետաքրքրական ըլլայ եւ երկարատեւ, ամէն ինչ ըրէք, որ արթննաք ձեր սեփական ննջարանին մէջ:

2. Խմորեղէնի եւ խնձորի միջեւ ընտրութիւնը կատարեցէք ջուրի օգտին:

3. Եթէ ժամացոյցին սլաքները ցոյց կու տան կէս գիշերը, իսկ դուք դեռ պէտք է ձեր գլուխը լուաք, ոտքերու մազահեռացումը կատարէք եւ եղունգներ ներկէք, միշտ ընտրեցէք քունը, որովհետեւ ամէն ինչ կարելի է ուղղել, սակայն ոչ ոք եւ ոչինչ կրնայ քօղարկել ձեր յոգնած, ճմռթկուած դէմքը եւ անտանելի տրամադրութիւնը:

4. Ճամբորդեցէք: Օգտագործեցէք ճամբորդելու իւրաքանչիւր հնարաւորութիւն: Նոր տպաւորութիւնները առանց ծերանալու նոր փորձ ձեռք բերելու հնարաւորութիւն են:

5. Իրավիճակը գնահատելէ առաջ դուք ձեզի հարց տուէք. «արդեօ՞ք այս գործը իմս է», ապա փակեցէք ձեր բերանը եւ գացէք աշխատելու:

6. Ձեր ժամանակն ու ջիղերը ոչ ճիշդ մարդու վրայ կարելի է վատնել միայն մէկ պարագայի, եթէ դուք բժիշկ էք, իսկ այդ մարդը՝ ձեզի բաւական լաւ վճարող հիւանդ:

7. Բուռն սիրավէպի եւ գումար շահելու հնարաւորութեան միջեւ ընտրեցէք երկրորդը:

8. Վէճի ընթացքին ոչ թէ կը ծնի ճշմարտութիւնը, այլ՝ միկրէնը: Ժամանակին արտասանուած՝ «ինչպէս դուն կ'ըսես» արտայայտութիւնը կը խնայէ ձեր ջիղերն ու ժամանակը:

9. Առանձնութեան մէջ անցուցած օրերը աւելի լուրջ արդիւնք կրնան տալ, քան մերսման սրահ յաճախելը:

10. Ոչ մէկ տղամարդ արժանի է, որ դուք տանջուիք անյարմար կօշիկներու մէջ:

## ՉԵՄՊԻՈՆԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԻՑ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԵՆ




Շուէյցարիայի մայրաքաղաք Բեռնում կայացած Եւրոպայի առաջնութիւն Հայաստանի ներկայացուցիչներն աննախադէպ յաջողութեան էին հասել: Հայ մարմնամարզիկները վերադարձան Երեւան եւ «Զուարթնոց» օդանաւակայանում նրանց դիմաւորեցին ՀԱՕԿ-ի եւ Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան ներկայացուցիչներ, լրագրողներ, երկրպագուներ:

Նժոյգմափերում աշխարհի 2015 թուականի բրոնզէ մետալակիր Յարութիւն Մերդինեանը հռչակուել էր Եւրոպայի չեմպիոն: Հայ մարզիկը վաստակել էր 15.366 միաւոր: Վահագն Դաւթեանը, Արթուր Դաւիթեանն ու Արթուր Աւետիսեանը դարձել էին արծաթէ մետալակիր:

«Մրցակիցներս սխալուեցին, ընկան: Կար լարուածութիւն, քանի որ պէտք էր վարժութիւնն անսխալ կատարել: Այժմ պէտք է աւելի բարդացնել վարժութիւններն աւելի բարձր միաւորների արժանանալու համար: Օլիմպիական խաղերին դեռ ժամանակ կայ:

«Շարունակում ենք նախապատրաստուել: Յուսով եմ լաւագոյնս ներկայացնել մեր երկիրը»,- լրագրողների հետ զրոյցում նշեց Յարութիւն Մերդինեանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ՝ 7:1



Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը 2016 թուականի Մայիսի 29-ին տարաւ իր պատմութեան ամենախոշոր հաշուով յաղթանակը:

ԱՄՆ-ի Լոս Անճելոս քաղաքի «Ստաբհաբ Սենթեր» ստադիոնում կայացած ընկերական խաղում Հայաստանի թիմը 7:1 հաշուով յաղթեց ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում 89-րդ տեղը զբաղեցնող Գուատեմալային (Հայաստանը 110-րդն է)՝ տպաւորիչ կերպով ընդհատելով առանց յաղթանակների շարքը (14 խաղ):

Հայաստանի մի քանի գրոհներից յետոյ Գուատեմալան բացեց հաշիւը: «Փիւնիկի» պաշտպան Վարազդատ Հարոյեանը սեփական տուգանայինի մօտ խախտեց կանոնները, իսկ տուգանային հարուածն անթերի իրացրեց Գուատեմալայի հաւաքականի 36-ամեայ աւագ Կարլոս Ռուիզը: Գոլից յետոյ Գուատեմալան սկսեց աւելի վստահ գործել եւ խաղը հաւասարուեց: Հայաստանի թիմն առաջին գոլային պահն ունեցաւ 18-րդ րոպէին, երբ Մարկոս Պիզելլին բարձր հարուածեց դարպասի առջեւից: Հայաստանի հաւաքականը հիմնականում գրոհում էր կենտրոնով՝ չօգտագործելով եզրերը: Խաղակէսի վերջնամասում հայկական թիմը դարձեալ ակտիւացաւ եւ խփեց 2 գոլ: 39-րդ րոպէին հաշիւը հաւասարեցրեց Հայաստանի հաւաքականի կազմում ամենաակտիւ ֆուտպոլիստ Հենրիխ Մխիթարեանը, որն աչքի ընկաւ Էդգար Մանուչարեանի փոխանցումից յետոյ: Քիչ անց Մանուչարեանը նաեւ օգտուեց մրցակցի դարպասապահի կոպիտ սխալից եւ խփեց երկրորդ կոլը:

Երկրորդ խաղակէսի սկզբնամասում Հայաստանի թիմը հաշիւը դարձրեց 3:1: Էդգար Մանուչարեանի արտակարգ փոխանցումը 50-րդ րոպէին գլխի հարուածով եզրափակեց Լուովի «Կարպատների» կիսապաշտպան Գեղամ Կադիմեանը, որը բացեց գոլերի հաշիւը ազգային թիմում: Ընդմիջումից յետոյ գուատեմալացիներն ակտիւացել էին եւ աւելի յաճախ էին գրոհում, բայց Հայաստանի հաւաքականը յաղթայարեց ճնշումը եւ շուտով խփեց չորրորդ կոլը, որից յետոյ մրցակիցը «կոտրուեց»: 60-րդ րոպէին գեղեցիկ կոլի հեղինակ դարձաւ Հենրիխ Մխիթարեանը, որը 10 րոպէ անց դարձաւ նաեւ հեթ-տրիկի հեղինակ: Հայաստանի թիմի կոլային հրավառութիւնը վերջնամասում շարունակեցին փոխարինման դուրս եկած Արթուր Սարկիսովն ու Ջաւէն Բադոյեանը՝ 7:1: Արտակարգ հանդիպում անցկացրած Հենրիխ Մխիթարեանն առաջին հեթ-տրիկը ձեւակերպեց հաւաքականում եւ կատարեց նաեւ 3 կոլային փոխանցում:

## «ՌԵԱԼԸ» ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԳԱՒԱԹԱԿԻՐ




Մադրիդի «Ռէալը» ռեկորդային 11-րդ անգամ հռչակուեց Եւրոպայի ուժեղագոյն ֆուտպոլային ակումբ:

Ախոյեանների լիգայի եզրափակիչում Արքայական ակումբը յետխաղեայ 11 մեթրանոցներով առաւելութեան հասաւ

Մադրիդի «Աթլետիկոյի» նկատմամբ: Միլանի «Սան Սիրոյ» ստադիոնում կայացած խաղի հիմնական եւ աւելացուած ժամանակն աւարտուեց 1:1 հաշուով:

«Ռէալն» աւելի վտանգաւոր էր գրոհում եւ 15-րդ րոպէին բացեց հաշիւը: Ստանդարտ դիրքի խաղարկման արդիւնքում աչքի ընկաւ սպանացի պաշտպան Սերխիօ Ռամոսը, որը խփեց առաջին խաղակէսի միակ կոլը: Գոլից յետոյ խաղի պատկերը փոխուեց: Հանդիպման տեմպը բաւական ցածր էր: «Աթլետիկոն» աւելի շատ էր լինում գնդակով, սակայն չէր կարողանում ստեղծել վտանգաւոր պահեր, իսկ «Ռէալը» չէր շտապում զարգացնել յաջողութիւնը:

Ընդմիջումից անմիջապէս յետոյ «Աթլետիկոն» կարող էր հաւասարեցնել հաշիւը, սակայն 48-րդ րոպէին ֆրանսացի յարձակուող Անտուան Գրիզմանը վրիպեց 11 մեթրանոցից: 70-րդ րոպէին Զինեդին Զիդանի թիմը կարող էր կրկնապատկել հաշիւը, բայց Քարիմ Բենզեմայի առաջխաղացումն աւարտուեց Յան Օբլակի վստահ սէյվով:

Ընդմիջմանը փոխարինման դուրս եկած բելգիացի յարձակուող Յաննիկ Ֆերէյրա Կարասկոն 79-րդ րոպէին խփեց «Աթլետիկոյի» պատասխան կոլը:

Լրացուցիչ 30 րոպէներին դարպասի գրաւումներ չարձանագրուեցին եւ նշանակուեց յետխաղեայ 11 մեթրանոց հարուածաշար, որն աւելի դիպուկ իրացրին «Ռէալի» ֆուտպոլիստները: «Ռէալից» 11 մեթրանոցն անվրէպ իրացրին Լուկաս Վասկէսը, Մարսելոն, Գարեթ Բէյլը, Սերխիօ Ռամոսը եւ Կրիշտիանու Ռոնալդուն: «Աթլետիկոյից» դիպուկ էին Անտուան Գրիզմանը, Գաբին ու Սաուլը, իսկ ճակատագրական վրիպումը թոյլ տուեց սպանացի պաշտպան Խուանֆրանը:

## ԺՈԶԷ ՄՈՈՒՐԻՆԻՈՆ՝ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵԴԻ» ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ




Պորտուգալացի մասնագէտ Ժոզէ Մոուրինոն նշանակուել է անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ, յայտնում է ակումբի թուիթերեան էջը:

53-ամեայ մարզիչն Անգլիայի 20-ակի ախոյեանի հետ կնքել է 3 տարուայ պայմանագիր, որն ունի մինչեւ 2020 թուականը երկարաձգելու հնարաւորութիւն:

Այս շաբաթ «Մանչեսթեր Եունայթեդը» հրաժեշտ էր տուել հոլանդացի գլխաւոր մարզիչ Լուի վան Գալին, որի գլխաւորութեամբ թիմը Պրեմիեր լիգայում գրաւել էր 5-րդ տեղը: Լոնտոնի «Ջելսիի» գլխաւոր մարզիչի պաշտօնից Դեկտեմբերին հեռացուելուց յետոյ Ժոզէ Մոուրինիոն մինչեւ այս գործազուրկ էր:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ԱԹԼԵՏՆԵՐ ԿԱՏԱՐԵՑԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՒԸ




Արտաշատում անցկացուած աթլետիկայի Հայաստանի առաջնութիւնում 2016թ. Ռիոյի Օլիմպիական խաղերի նորմատիւը կատարել է Լեւոն Աղասեանը: Նա եռացատկում ցոյց է տուել 16 մ. 85 սմ արդիւնք, որը հենց օլիմպիական նորմատիւն է:

Աղջիկների 200 մեթր վազքում 15-ամեայ Գայեանէ Ջիլոյեանը տարածութիւնը յաղթահարել է 23.16 վայրկեանում: Այս մրցատարածութիւնում օլիմպիական նորմատիւը 23.20 վայրկեան է:

Մինչ այս Հայաստանից աթլետիկայի օլիմպիական նորմատիւը կատարել էին հեռացատկորդ Ամալիա Շառոյեանը եւ վազորդ Դիանա Խուբեսերեանը:

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Շատ սիրալիր կեցուածք ունիս օտարներու նկատմամբ, որը քեզ կը մօտեցնէ մարդոց: Ժամանակացոյցիդ մէջ չ'ակնկալուած փոփոխութիւններ պիտի ծառայեն քու լաւութեանդ եւ օգտիդ: Ծրագիրներդ մի փոխեր եւ շարունակէ ճամբադ:
Բախտաւոր թիւերդ են: 5,11,18,25,30

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Կարեւոր որոշում մը առնելու տագնապին մէջ կը գտնուիս, որովհետեւ կ'ուզես ճիշդ որոշումը առնես: Անձի մը խօսքերը սիրտդ շատ պիտի ալեկոծեն, սակայն քու լաւութեանդ համար են: Բարեկամէ մը պիտի շահագործուիս:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,19,21,28

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Դուն պէտք ունիս անձի մը որ քաջալերէ քեզ ու սորվեցնէ քեզի կեանքին արժէքները: Եղբօրդ հետ յարաբերութիւնդ խորացուր եւ մտերմօրէն ու համբերաշխութեամբ վարուիր հետը: Թոյլ տուր որ սիրտդ ծրագրէ ճամբաներդ եւ հետեւէ անոնց:
Բախտաւոր թիւերդ են: 10,14,22,30,32

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Նիւթական որոշումներ առնելը բաւական դժուար պարագայ մըն է քեզի համար: Սակայն եթէ ուղիղ կեցուածք ունենաս՝ ճիշդ որոշումները պիտի առնես: Բազմազբաղ ըլլալով՝ կը դերանաս ընտանեկան պարտականութիւններուդ:
Բախտաւոր թիւերդ են: 4,17,25,27,33

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Շատ զգոյշ ես ունեցած տեղեկութիւններդ սխալ կերպով արտայայտելէ որպէսզի չվնասես ուրիշները: Ընտրութիւններդ լաւ ըրէ որ չզղջաս: Օտար երկիր մը ճամբորդելու փափաքդ շատ մեծ է եւ սակայն հաւանականութիւնը՝ քիչ:
Բախտաւոր թիւերդ են: 10,11,26,34,35

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Կեանքդ ընկղմած է շփոթութիւններու մէջ եւ կարծես կը սպասես որ մէկը ազատէ քեզ անկէ: Կողակիցդ աննկատ մի թողուր եւ մի անտեսեր: Ընտանիքիդ անդամներուն հետ գէշ վերաբերմունք ունենալը կը նշանակէ անարգել զանոնք:
Բախտաւոր թիւերդ են: 7,18,23,28,31

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Չես սիրեր ժամանակդ վատնել պարապ բաներու համար: Առեւտրական կեանքիդ մէջ, շատ լաւ սիրաշահած ես բոլորի վստահութիւնը եւ յաջողութիւն արձանագրած: Քաղաքիդ օրէնքները շատ լաւ կիրարկես եւ բացառիկ պաշտօնեայ մըն ես:
Բախտաւոր թիւերդ են: 1,16,25,30,34

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Պատասխանատուութեան մեծ գիտակցութիւն ունիս եւ շատ ուղղամիտ ես: Անփոփոխ միտք մը ունենալուդ՝ դժուար է կարծիքներ փոխարինել քեզ հետ: Հանդիպում մը պիտի ծրագրես գործընկերոջ մը հետ, նոր գործի առնչութեամբ:
Բախտաւոր թիւերդ են: 9,18,20,25,32

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Ընտանիքիդ շատ մօտ մէկը տաք վիճաբանութենէ մը ետք, պիտի նեղացնէ քեզ եւ գէշ տրամադրութեամբ պիտի հեռանայ քեզմէ: Գործիդ նկատմամբ ունեցած հասկացողութիւնդ քեզ կ'առաջնորդէ մեծ յաջողութիւններու:
Բախտաւոր թիւերդ են: 14,17,24,28,31

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Կեանքդ մեծ փոփոխութեան ենթարկելով՝ նոր եւ ուրախ քայլ մը առած եղար: Յաջողութիւններով լեցուն ապագայ մը կը սպասէ քեզ, ըլլայ an ընտանեկան եւ գործի մէջ: Մեծ գումարի մը պիտի տիրանաս եւ բոլոր պարտքերդ պիտի վճարես:
Բախտաւոր թիւերդ են: 8,11,22,23,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Շատ ներող ես եւ համբերաշխութիւն սիրող: Կողակիցիդ դիտողութիւնները բնաւ թող չցնցեն քեզ: Ընտրութիւններդ շիտակ թող ըլլան եւ կարեւորագոյնը՝ քու օգտիդ համար: Անձի մը ներկայութիւնը շատ կը փնտռես եւ անձկանօք կը սպասես անոր:
Բախտաւոր թիւերդ են: 5,22,23,33,34

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Բարեկամի մը խօսքերը մեծ բերկրանք եւ ուրախութիւն կը պատճառեն քեզի եւ կարօտով կը սպասես անոր ժամանման: Ապագայի ծրագիրներդ շատ են, լաւ դասաւորէ որպէսզի չկորսուիս եւ չյուսահատիս արդիւնքներէն:
Բախտաւոր թիւերդ են: 15,21,26,29,35

## ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

*Շարունակուածէջ 6-էն*

*եւ ողջունենք եկողները: Անոնք կամաց կամաց սկսած են պակսիլ: Այսօր մեր կեանքին մէջ կը բնութենք Պէպօ Սիմոնեաններ: Անոնք տուին մեր ժողովուրդին ինչ որ ունէին», ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս:*

*Ան ապա խօսեցաւ Սիմոնեանի կեանքի ընկերոջ՝ Տիկ Ազատուհի Սիմոնեանի գործունէութեան մասին: «Որպէս մտաւորական, մանկավարժ, ուսուցիչ, դասախօս՝ մեր լիբանանահայ կեանքի կրթական մշակութային մարզէն ներս, անցնող տասնամեակներուն ընթացքին Տիկ Սիմոնեան ներկայ եղաւ Պէպօ Սիմոնեանի կողքին եւ իր մտածումները, իր զգացումները բաժնեց մեր ժողովուրդին հետ, մանաւանդ կրթադաստիարակչական մարզէն ներս: Այս առթիւ, երբ մենք կը յիշենք Պէպօ Սիմոնեանը, կը կարծեմ որ լաւագոյն առիթն է իրեն կողակից Ազատուհի Սիմոնեանը պարգեւատրել Մեսրոպ Մաշտոց շքանշանով», ըսաւ Արամ Ա. Կաթողիկոսը:*

*Կաթողիկոսական կոնդակի ընթերցումէն ետք Տիկ. Ազատուհի Սիմոնեան ստացաւ շքանշանը՝ որպէս մտաւորական, հայ ժողովուրդի մշակութային, կրթական, մանկավարժական ու դաստիարակչական կեանքին մէջ իր ունեցած ներդրումին համար, մանաւանդ նկատի առնելով ստորագրած յօդուածներն ու ներկայացուցած հրապարակային դասախօսութիւնները: Տիկ Ազատուհի Սիմոնեան հակիրճ խօսք մը արտասանեց, որուն մէջ Սիմոնեան ընտանիքի անունով շնորհակալութիւն յայտնեց վեհափառ հայրապետին, շնորհահանդէսի կազմակերպիչներուն եւ դասախօսներուն: Ան խոստացաւ յառաջիկայ տարիներուն ստեղծել համացանցային կայքէջ մը, նուիրուած մտաւորականի անթիւ ու անհամար գործերու հրապարակումին:*

*Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը, խմբավարութեամբ Գարեգին Վրդ. Շխրտըմեանի, ներկայացուց Բարսեղ Կանաչեանի մշակած «Նարօ» երգը եւ «Խաչը»՝ խօսք Եղիշէ Արք. Դուրեանի, երաժշտութիւն՝ Շահան Պէրպէրեանի:*

*Շնորհահանդէսի աւարտին ներկաները ստացան «Գրականութեան ճամբուն Վրայ» գիրքին, ինչպէս նաեւ Ընկ. Պէպօ Սիմոնեանի յիշատակին նուիրուած «Արարատ»-ի հրապարակած յատուկ թիւէն օրինակներ: Ներկաները մտերմիկ զրոյցներով բաժնեցին իրենց յուշերը Ընկ. Պէպօ Սիմոնեանէն, որ թէեւ մեր աշխարհէն հեռացաւ աւելի քան տարի մը առաջ, այնուամենայնիւ միշտ ներկայ է իր աշակերտներուն, ընկերներուն եւ բարեկամներուն մտքերուն ու սրտին մէջ:*

## ՌՈՒՍԱՖՈԲԻԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

*Շարունակուածէջ 8-էն*

*լուց յետոյ Դաշնակցութիւնը հրաժարւում է իր որոշումից եւ, ի վերջոյ, ձեռնամուխ լինում ռուսական բանակի մէջ հայ կամաւորական ջոկատների ստեղծմանը:*

*Երկու երկիր կռւում են, կարի՞ք կա՞յ կամաւորական ջոկատներ մտցնել հակամարտող ուժերից մէկի բանակի մէջ ու ծառայել նրա շահերին՝ մանաւանդ չունենալով որեւէ երաշխիք, թէ յաղթանակի դէպքում թոյլ կը տան անկախութիւն ունենալ: Գոնէ անհրաժեշտ էր ինչ-որ գրաւոր պայմանագիր կնքել, յստակ երաշխիքներ ունենալ, որոնք չկատարելու դէպքում նոր կարելի կը լինէր դաւաճանութեան մէջ մեղադրել Ռուսաստանին: Բայց, կրկնեմ, որ կամաւորական շարժում այլ ժողովուրդներ էլ են ունեցել, բացի այդ՝ դրան ամբողջ հայ ժողովուրդը չէր մասնակցում:*

*Լէոն նաեւ մեղադրում է Դաշնակցութեանը, որ 1915-ին ռուսական բանակի նահանջի հետ գաղթեցրեց Վանի ու Վասպուրականի բնակչութեանը, որ հնարաւոր էր մնալ եւ Վանը պահել հայկական[3]: Եթէ ռուսական բանակը գնար, հայկական պաշտպանութիւնը կարո՞ղ էր, արդեօք, երկարաժամկէտ դիմադրել թուրքական բանակին: Կասկածելի է:*

### Առաջին աշխարհամարտի եւ ներկայ իրադրութեան զուգահեռները

*Ռուսաֆոբները յաճախ են ասում, որ կը կրկնուի 1914-1915 թուականների իրավիճակը: Սակայն թէ ինչպէ՞ս, չի բացատրւում, իրավիճակները տարբեր են.*

*1-ին. աշխարհը փոխուել է, մեծ տէրութիւնների շահերի մէջ չի մտնում տարածքներ գրաւելն ու կցելը, հետեւաբար Ռուսաստանն էլ խնդիր չունի նեղուցները գրաւելու:*

*Ի տարբերութիւն 20-րդ դարասկզբի, այսօր կայ արդէն անկախ հայկական պետութիւն, որը Ռուսաստանի սեփականութիւնը չի, որ այն իր ուզած ձեւով տնօրինի:*

*Եթէ շատ ուզենք ընդհանրութիւն գտնել, ապա այն է, որ ինչպէս մինչեւ 1917 թիւը, այսօր էլ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը պաշտպանում է ռուսական բանակը, եւ կարող է 1917 թուի նման այնպիսի իրավիճակ առաջանալ, Ռուսաստանում այնպիսի փոփոխութիւններ լինեն, որ բանակը հանեն Հայաստանից ու սահմանները բաց մնան Թուրքիայի ագրեսիայի առաջ:*

*1917 թուականի բոլշեւիկեան յեղափոխութեան հետեւանքով ռուսական բանակը հեռացաւ Կովկասից, եւ Հայաստանն ու հայութիւնը մնաց միայնակ թուրքական վտանգի դիմաց, ուժերի լարումով հայկական դիմադրութիւններ կազմակերպուեցին՝ Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա, եւ արդիւնքում ստեղծուեց անկախ Հայաստանի Հանրապետութիւնը:*

*Եթէ ապագայում ռուսական բանակը հեռանայ, Ռուսաստանին մեղադրելը կոռեկտ չի լինի, նա հայ ժողովրդի հոգաբարձուի առաքելութիւն չի վերցրել իր վրայ եւ Հայաստանում զօրք է պահում ոչ թէ հայերին պաշտպանելու, այլ իր շահերի համար եւ երբ ուզի՝ կարող է հանել այն:*

*Հայաստանն իր անվտանգութեան հայեցակարգը պէտք է կառուցէր այնպէս, որ հաշուի առնէր թուրքական վտանգը, անկախութեան 25 տարիները բաւական ժամանակ էին այնպիսի պաշտպանական համակարգ ստեղծելու համար, որ հնարաւոր լինէր դիմադրել նաեւ թուրքական ագրեսիային: Սակայն, Հայաստանի քաղաքական վերնախաւը, յոյսը դնելով Ռուսաստանի վրայ, անվտանգութեան հայեցակարգ մշակելու փոխարէն հարստանալով է զբաղուած:*

## ՄԵՐ ՏՂԵՐՔԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*ո՞ղջ են: Արդեօք այս տղաքը բաւարար փամփուշտ ունի՞ն:*

*Եւ հիմա, հարիւր եւ աւելի կտրիճներ եւս նահատակուեցան մեր Հայրենիքին սուրբ հողը աւելի եւս սրբացնելով:*

*Եւ հիմա, Յարդգողի Աստղաբոյլի համաստեղութեան վրայ հարիւր աստղեր եւս աւելցան, Վահագնի Մեհեաններուն մէջ փառաբանուելու Գեղեցկութեան Աստղիկ Աստուածուհիին նաժիշտներուն կողմէ:*

*Եւ հիմա, «Անահիտի Ծիծերն ի վեր» հարիւր կտրիճներ անմահութեան նեկտարով կը սնանին վերէն պաշտպանելու Հողը մեր Հայրենական:*

*Եւ հիմա, Նոր Վահագներ կը ծնին ամէն օր, վիշապասպան հերոսները մեր սրբազան, որոնք կ'երթան սատկեցնելու, «օձի գլուխները ուտելու» եւ անոնց «արիւնը խմելու»:*

*Վա՜յ քեզ Թուրք, հազար վա՜յ քու իժածնունդ մայրերուն:*

*Եւ հիմա, Աստուածները մեր Հեթանոս, Արարատի գագաթին վրայ, աներեւոյթ Մեհեաններէն չանթաբուռ մարտիկներով կը պատրաստուին չանթահարել թշնամիները մեր մահասփիւռ:*

*Թող Արամազդն ու Անահիտը, Թող Վահագն ու Աստղիկը պահապանը ըլլան մեր կտրիճներուն: Թող Վահագնի Բազուկը խեղդէ Թուրք Վիշապը այդ ահաւոր: Թող գեհենի կրակները մոխրացնեն Սադայէլին իժերը այդ թունաւոր:*

*Փոքր Մհերները արթուն կը հսկեն:*

*Մե՛նք, թոռներն ու ծոռները Թորգոմա Մեծ Տան, կա՛նք, Պիտի Լինե՛նք, ու դեռ Շատանա՛նք:*

*Մե՛նք, Հայկեան Նետով պիտի խոցենք սեւ սիրտը մեր Ոսոխին:*

*Մե՛նք, Նիւքարի ժառանգորդներս, Մե՛նք, Տիգրան Մեծի Զինուորներս, Մե՛նք, Անդրանիկներու, Եկարեաններու, Գէորգ Չաւուշներու, Եաղուպեաններու Հետեւորդներս, պարտութիւն Չե՛նք ճանչնար:*

*Մե՛նք, Ճակատագրուած ենք Յաղթելու:*

*Արցախը Մե՛րն է:*

*Յաղթանակը Մե՛րն է*


### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԺԱՆՕ ՊԱԼԵԱՆԻ եւ ՊՕՂՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթներով Տէր եւ Տիկ. Կրէկ եւ Սիլվա Նիկողոսեաններ իրենց խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնեն ընտանեկան բոլոր պարագաներուն:*

*Առ այդ 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*



## Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

**Կը Կազմակերպէ**

## ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

**Տարիքային Բոլոր Խումբերու Համար**

**Ղեկավարութեամբ՝**

**Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող Եւ Հեռուստալրագրող**

## ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

**Փորձերը տեղի կ՛ունենան ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104**

**Արձանագրութեան Համար Դիմել՝**

**Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662**

**Պր. Յարութ Տէրվիչօղլեանին Հեռ. 323-351-8001**


## ՀԵՔԻԱԹ ԹԱԳԱՒՈՐԻ

*Շարունակուած էջ 15-էն*

*պարհ էր ընկել, փնտռում այն ուղին, որ իրեն կը տանէր դէպի հիւսիսային կողմն աշխարհի: Քայլամոլոր անցնում էր ծովի ափերով, ջուրն էր յանկարծ ալիքուել, ափին էին մօտեցել ջրահարսեր, նրանք չա՜տ-չա՜տ սիրուն էին, Արմինը ապշել էր, արդեօք այն երազո՞ւմ էր, աչքերն էր բաց ու խուփ արել, չէ՜, այն իրական էր...:*

*-Սիրուն տղայ, ո՞ւր ես գնում, մի՝ զարմանար, մի՝ վախենար, մենք էլ ժամանակին քեզ նման էինք, չարքերն էին մեզ մարդանման ձուկ դարձրել:*

*-Գնում եմ հիւսիսի կողմն աշխարհի, անմահութեան գաղտնիքը որոնելու, կանչել էր Արմինը:*

*-Արի քեզ տանենք մեր պալատ, Թագուհին խորհուրդ կը տայ քեզ, ասել էին ջրահարսերը:*

*Տղային իրենց լողակների վրայ պահած տարել էին իրենց ստորջրեայ ապակեպատ պալատ: Թագուհին, խրատել էր գնալ այն որոնել արեւելային կողմն աշխարհում, որտեղից արեւն է ծագում:*

*Արմինը երկար քայլել էր ընդարձակ դաշտերով: Հեռւում, արդէն տեսանելի էին եղել բարձր լեռներ, որոնց գագաթներին էլ սպիտակ սաւաններ փռուած: Նստել էր մի քարին, մտածել ինչպէս հասնէր այդ լեռների աշխարհ: Փերիներ էին մօտեցել նրան, կանչել էին.*

*«Անուշ տղայ, արի բարձրացիր մեր թեւերին, այդ աշխարհ տանենք քեզ»:*

*Յօգնատանջ տղան, նստել էր նրանց թեւերին, տարել հասցրել էին այդ լեռների աշխարհ: Պատուիրել էին ոտքով անցնել նրա ճամբաներով, վայելելու նրա գեղեցկութեան սքանչանքը: Արմինը անցնում էր կանաչ արտերով, ծիածան գօտիներ կապած այգիների միջով, հէքիա՞թ էր, ո՜չ, աշխարհն էր այդ հէքիաթային: Երկար ճամբայ անցնելուց յետոյ, արեւը արդէն հասել էր հորիզոն, բազմել լեռների գագաթներին, հրաժեշտի կարմիր լոյս վառում: Մթնե՞լ էր աշխարհը, չէ՜, երկրի լեռների գագաթներից կրակ էր ժայթքում, լոյս, լոյս էր իջնում դաշտերին, անցորդների ճամբաներին: Հասել էր մի քաղաք, մարդիկ հարցրել էին՝*

*-Ո՞վ ես, ո՞ւր ես գնում: Արմինը պատասխանել էր՝*

*-Եկել եմ անմահութեան գաղտնիքը որոնելու, տարէք ինձ ձեր աշխարհի իմաստունների մօտ:*

*Քաղաքի մեծը հրամայել էր, նրան առաջնորդէին ծովից այն կողմի իրենց աստուածների բնակավայր: Հասել էին մի ծով, նրան եզերող լեռների գագաթներից կրակ էր իջնում ջրերին, վառւում էին ջրերը, բոց ու ծուխ էր բարձրանում, արեգակունք աչքերով, շիկահեր մօրուսով հրաշագեղ մի պատանի էր ջրերը ճողբելով դուրս վազում, զարմացած նայել չորս կողմը, ուղեկցողը ասել էր այդ իրական է:*

*Հասել էին սիւնազարդ մի տաճար: Նրա առաջ բացատ էր, լիքը մարդիկ, թմբուկ էին զարկում, շուրջ պարեր բռնում: Արմինը խիստ ապշել էր, այդ ի՞նչ աշխարհ էր...: Տաճար էր բարձրացել, քրմապետն էր նրան դիմաւորել, հարցրել էր աշխարհի ո՞ր կողմից էր եկել եւ ի՞նչ էր փնտռում իրենց երկրում: Արմինը պատասխանել էր, որ եկել էր ծերունի հօրը համար անմահութեան գաղտնիքը որոնելու:*

*-Անուշ տղայ, գնայ հօրդ պատմիր, որ անմահութիւնը արարած գործն է, գործն է անմահ: Տե՛ս, այս բագինի առաջ աստուածներ են կանգնած, եկել են Վահագնի ու Աստղիկի հարսանիքի խրախճանքին մասնակցելու, նրանք բոլորը մեր նախնիների թագաւոր-թագուհիներն էին, նրանք բոլորը իրենց գործով են անմահացել, աստուածացել: Գնացել էին տաճարին մօտիկ այգի, արեւի կրակ գոյնով պտուղ պոկել ծառից, տուել տղային, պատուիրել այն տանել իր թագաւոր հօրը, որը նրան առողջութիւն, կորով եւ ոչ թէ անմահութիւն կը պարգեւէր: Երեք խնձորների հետ, տիեզերքի հեռուներից այն ընկել էր մեր "Սրբազան Լեռնաշխարհ", "Ծիր" ենք ասում նրան: Նրա հունտը ցանեցէք ձեր երկրի հողին, ծառ դառնայ, ծառեր դառնան, առողջութիւն, կենսունակութիւն պարգեւի ձեր երկրի մարդկանց:*


## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն



**Vahe Atchabahian**
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



**Save Support Sustain**

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org



**www.massispost.com**
**daily news updates**

# 35 ԱՄԵԱԿ

Կազմակերպութեամբ՝ «Մասիս»-ի Օժանդակ Մարմինի

## Մասիս Շաբաթաթերթի 35րդ Ամեակի
## ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

**Շաբաթ, 4 Յունիս, 2016**
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ԼԻՒԴՈՎԻԿԱ ԵՒ ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ ՍՐԱՀ
117 S. Louise St., Glendale, CA 91205

Երեկոն կը Խանդավառէ
**ՎԱՉԷ ՅԱԿՈԲԵԱՆ**
եւ իր Նուագախումբը

Տոմսերու համար հեռաձայնել 626•755•4773

Մուտքի Նուէր՝ $75.00

